			Հարցն մերոց Աստուած որ ապրեցու-
			ցեր:
23	բձ	Գիշ. բ. օր պհց. Յիս:	Հրց՝ ապշ. որ:
			Հարցն մերոց Աստուած որ ի նեղու-
			ցեր:
24	բկ	Եշ. բ. օր պհց. Յիս:	Հրց՝ ապշ. որ:
			Հարցն մերոց յաւիտեան:

ՆՈՅԵՄԲԵՐ

25	բձ	Ուր. ե. օր պհց. Յիս: Հրց՝ հնդ. ժդ	9
		աչ. Օրհնեալ ես զու Քրիստոս:	
26	բկ	Եր. Սրբոցն՝ Քրիդորի սքանչելագոր- ծին. Նիկոլայոսի հայրապետին, և Միւ- սոնայ եպիսկոպոսին:	10
		Օրհ՝ ակ. Որհ զարգարեցին. առ:	
		Մէ՛ և Ճշ. բարձանք Երդ:	
		Սուրբ յաւիտի Սէր:	
		Յուսովի: Հճ՝ աչ. Սուրբ ես Տէր:	
		Յշ. Ա. Աստուածանի:	
27	աձ	Կիր. Ա. Յիս: Օրհ՝ աչ. Երդեցյուք երգ նոր:	11
		Հրց՝ յար. ակ. Օր վասն մե- րոյ փրկութեամ:	
		Հճ՝ յար. աչ. Օր ան- ձառ էութեամբ:	
28	ակ	Բշ. Սրբոց կուսանացն՝ Յուլիանեայ և Վասիլուհւոյ:	12
		Օրհ՝ մրտ. ակ. Յամե- նայն ժամ օրհ:	
		Հրց՝ մրտ. բչ. Ծնդ սուրբս քո բարեբ:	
		Մէ՛ և Հճ՝ ոչ. Յի- շատակ Քրիստ:	
29	բձ	Գիշ. Սրբոցն՝ Կունկիանոսի քահանա- յին. Տապագրոսի. Պրօպտի. Անդրինի- կոսի և Ուսեփիմեայ՝ և այլոց աշակեր- տացն Պօղոսի:	13
		Օրհ՝ ոչ. Եր թիւ Թմասատոթիւն երկ. առ:	
30	բկ	Գիշ պհց: Հրց՝ ապշ. որ:	14
		Յիս յաւիտ: Յ. և Ա. Անդրինի առաք:	

# ԴԵԿԱՄԵՐԵՐ.

31 օր:

ՏՐԵ և ՔԱՂՈՅ

		0. Հ.	0.
1 դՃ	ԵՇ. Սրբոյն՝ Կղեմայ հայրապետին, և Բագարատոյ Տռուունոյ Եպիսկոպոսին:	ի 15	
0 րՃ 4 չ.	Զարիսական մահ սրբ Հրց 4 չ.		
0 ր զանշափ քո՞ ՍՇ. և ՀՖ. 4 չ. Մահկունքըն նոր սիօնի:			
2 դԿ	Ուր. պհք: Հրց Հնդ. ակ. Գոհարիս բանեմք: Յերեկ. Նախ. բէ. Անդիլը: Լր. Խ. 8. և Ռ. Ամբուանյ Տարդ:	ի 16	
3 դՃ	ԵՇ. Սրբոյ առաքելոց և առաջին կուսառոքացն մերոյ ԹԱՒԵ՛ՍԻ և ԲՈՒԴԻ՛ՍԵՄԵ՛ՍԻ Անկիզըն. սոր: Թագառոր յաւիտեան, Այսօր դասք: (Տես ։ Եպական Ընտ) 1877թ. 10 յաւ. և 1878թ. 32 յաւ):	ի 17	
4 դԿ	Ակիր. Բ. Յիս: 0 րՃ 4 չ. Յաղթական: ի 18 Հրց յալ. բէ. Անապական: ՀՖ. 4 չ. Հրեցորակ քո՞ Տէր: Յ. և Ռ. Վաստվակայ:	ի 18	
5 ամՃ	ԵՇ. Սրբոյն՝ Գենարիսի, Եպիսկոպոսին և Մեռկեռիսի զինառորին, Յակով-	ի 19	

# ԴԵԿԱՄԵՐԵՐ

կայ և Խրառափառոյ: 0 րՃ մրտ, աչ. Ժողովեալքս ի յիշառակ: Հրց 4 չ. Զիւնորութիւնք: ՄՇ. և ՀՖ. աչ. Զինառն Քրիս:

6 ակ

Գր. Խախառվկայ և անդրանիկ թաւիկ 20 գաւորին մերոյ սրբոյն Արգարու: 0 րՃ ակ. Որ զերկնաւոր. սոր: (Գիրք և Աւետարանն Խեռովովնակ): Յ. և Ռ. Ավետարանի սովորու:

7 բՃ

ՊՇ. պհք: Հրց ապշ. 7 չ. Ճշմարտավիշ գոհանանք:

8 բԿ

ԵՇ. Սրբոյ Հարցն Եգիպտացոց Պօղոսի. Պօղայ, Մակարայ, Խեազրի, Յօհաննոս Պընկցոցն, Յօհաննու կարծահանակին, Նեղոսի, Սրսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիսի, Պիմենի, և այլոց սրբոյ Հարցն: 0 րՃ աչ. Որք զերազանցեալ (յագնակի) սոր. ՍՇ. և ՀՖ. բէ. Պարծանք եկեղեց: Յերեւնի. Եկան ակ. Որ նախիմաց:

9 դՃ

Ա Ուր. պհք: Յղութիւն սրբոյ կուսառուն Մարիամու ի յԱննայէ: 0 րՃ 4 չ. Երգեցէք որդիք. սոր: Սէծ Եկան 4 չ. Ծառ կենաց: ՀՖ. 7 չ. Նոր սիօն:

Ա.	Օ.	ԴԵԿԱՏԵՄԲԵՐ	Վ.	Շ.
10	Դկ	Եր. Սրբոյն Նիկոլայոսի Զմիւռնաց ցւոյ սքանչելագործ Հայրապետին: Օրէ՝ ահ, Ուրք զարդարեցին, առք: Մէ՛ Սրբ: Հրացանի անմար:	իւ	24
11	Դկ	❖ Կիր, Գ, Յիս: Օրէ՝ թէ, Օրէնեացուք զծէր: Հրց՝ յար, Է՛, Անսկիզբն Աստու- ած: Հմբ՝ թէ, Օր ի վերդ ես: Բարձէ: Ո, Յաշօնը պահոյ:	լ	25
12	Դկ	❖ Սկ. պհք: Սրբոյն Մինասայ, Երմա- ղնեայ և Գրաբոսի, և կամաւոր աղ- քատացն Յօհաննու, և Արքսիանոսի: Օրէ՝ մրտ, թէ, Ի յիշատակ վկայ՝ ցքոց: Հրց՝ մրտ, բէ, Օրէնեմք զքեկ Տէր անսկ: Մէ՛ և Հմբ՝ բղ յիշատակ: ՔԱՂՈՅ:	ա	26
13	Աճ	❖ Պի. Օրբոյն Կուռնէլիսի հա- րիւրապետին, և Նմաւօնի ազգականին Քրիստոսի՝ որ խաչեցաւ յիրուսաղէմ, Պօղիւալապոսի Հայրապետին Զմիւռնոյ. և սրբոց վիտայիցն՝ որք Արևելս կատա- րեցան: Օրէ՝ մրտ, աչ, Ժողովեալ քս ի յիշատակ: Հրց՝ Խօնանսանից՝ թէ, Օր ի Հօրէ առաք: Մէ՛ և Հմբ՝ աչ, Աշակերտք Քբիստ: Յ, և ՈՒ, և առաջարկուսի: Լ, Ծառ:	բ	27

Ա.	Օ.	ԴԵԿԱՏԵՄԲԵՐ	Վ.	Շ.
14	ակ	❖ Պի. պհք: Հրց՝ առզ, թէ, Տէր Աս- տուած մեր: Լ, Սպէֆոնսոսի Նախածնային:	գ	28
15	բձ	❖ Պի. Սրբոյն Եւստրատիոսի, Օգուստոսիոսի, Յւղինէսոսի, Ովուստէսի, և Մարդարիոսի: Օրէ՝ մրտ, բէ, Օրէ- նեն զքեզ Աստուած: Հրց՝ մրտ, բէ: Օրք ի մարտի: Մէ՛ և Հմբ՝ բէ, Որ Հշուր սիրոյ քռ Լ, Յալշանու աւետ:	դ	29
16	բկ	❖ Ուր. պհք: Հրց՝ հնդ. բէ, Արարիշ և մարդասէր: Յէրէ, Նախ. գէ, Յաղթօղ և սուրբ: առք: Լ, Մանհանյն Բէլուշնէմ:	ե	30
17	գձ	❖ Եր. Սրբոյն Յակոբոյ Մծրենոյ Հայրա- պետին, Մարտովէի Ճնաւորին, և Մե- լիտոսի եպիսկոպոսին, Օրէ՝ գէ, Յաղ- թօղ և սուրբ: առք: Հմբ՝ աչ, Սուրբ ես Տէր: Յ, և ՈՒ, Գանիւլէ հարգ: և Եր- իշ հանէ: Յն, Լ:	դ	1
18	գկ	❖ Կիր. Գ, Յիս: Օրէ՝ գէ, Երգեցէք Տեաւն երգ նոր: Հրց՝ յար, գէ, Փա- ռաւորեալ որդի: Հմբ՝ գէ, ԶԱստուա- ծայ, և Բղ քռ յարտ թիւնդ, և Առեալ և մեր: Հարսանիս:	է	2
19	գձ	❖ Սրբոց Հայրապետացն Խնասի- ոսի Ալդէի, և Մարտոթայի եպիսկո-	լ	3

ԴԵԿԱՏԵՄԲԵՐ

պահն,	Օրհ՝	մրտ.	րէ.	Այսօր յիշատակ	
սրբոցն:	Հրց՝	մրտ.	րէ.	Ութ հաղորդե-	
ցան:	Մէ.	և Հիք՝	րէ.	Որ հրաւիրեցեր	
զառաջան:	Լ.	Եւ բեռարովի Հ.		հայրադ:	
20 դկ	Գր. Սրբոցն՝ Թէովոմպայ եպիսկոպո-	թ	4		
	սին, Թէովնայ վկոյին, և չորից զինաւոռ-				
	բասոսի, Եւսեբի, Եւսիզի, և Բա-				
	սիլվերեայ: Օրհ՝ մրտ. րէ. Ի յիշատակս				
	վկայ ց քոց: Հրց՝ մրտ. րէ. Ութ զտան-				
	ջանս յանօրինաց: Լ. Բար նոր Տօմորի				
	Յունաստը, և Տարեհուտք 1884 թ. և Տօն				
21 աձ	Գր. պհք: Հրց՝ ապշ. աղց. րէ. Որ	ժ	5		
	զերիս մանկունննի ի հրոյն:				
22 ակ	Եշ Սրբոց կուսանացն՝ Խոմոսի և	ժա	6		
	Գոմայի և Գլերիկոսի քահանային. և				
	երկուց բիւրոցն, որք այրեցան յեկեղե-				
	ցին Նիկոմիդայոց: Օրհ՝ մրտ. րէ. Ի				
	յիշատակս վկայից: Հրց՝ մրտ. աէ. Յա-				
	մենային ժամ օրհ: Մէ. րէ. Այսօր ընդ				
23 բձ	Ուր. պհք: Հրց՝ հնդ. րէ. Օրհներ	ժր	7		
	գքեղ հյու Յերէ. նորի. րէ. Յաղթող				
	գտաւ. առբ:				

ԴԵԿԱՏԵՄԲԵՐ

24 բկ	Եր. Սրբոյն՝ Գաւթի մարգարէին և	ժգ	8		
	Յակոբայ առաքելոյն: Օրհ՝ րէ. Յաղ-				
	թող գտաւ. առբ: Թագաւոր յանիտեան:				
	Այսօր դասք հրեշտակաց: Մէծ Առաւ-				
	շաղա: Մէ. և Հիք՝ րէ. Օրհնեցէք				
	զծէր: Յ. և Ռ. Ճրտառոց Յանոր:				
25 դձ	Կ կիր. Ե. Յիս: Օրհ՝ րէ. Գդնական ժդ	9			
	ընդունե: Հրց՝ գէ. Նախայտ իտեան:				
	Հիք՝ գէ. Փառ աւորեալ է քո յարու-				
	թիւնդ: (ցվերջն: ) Յերէ. Նախ. գէ. Նա-				
	հատակ. առբ: Յ. և Ռ. Ծառնդն Քրիս-				
	տոսի. և ուսիկէ մինչեւ յ 4. Յունլորի:				
	Լ. Յայտն Արդան. և բափէկ 8 օր:				
26 դկ	Բշ. Սրբոյն Ստեփանոսի նախավը- ժե	10			
	կային և առաջին մարտիրոսին: Օրհ՝				
	գէ. Նահատակ. առբ: Թագաւոր յաւ:				
	Այսօր դասք հրեշտակաց: Յերէ. Նախ.				
	րէ. Յնձայ այսօր. առբ:				
27 դձ	Գր. Սրբոց առաքելոցն՝ Պետրոսի և	ժգ	11		
	Պողոսի: Օրհ՝ րէ. Յնձայ այսօր. առբ:				
	Թագաւոր յաւ: Այսօր դասք հրեշ:				
	տեսառ սեփակ և Պէտրոս և Պէտրո-				
	լիքանաց: Յ. և Ռ. Ստեփանոսի նախավէ:				
28 դկ	Գր. պհք: Հրց՝ ապշ. րէ. Աստու-	ժէ	12		

ԳԵԿՏԵՄԲԵՐ

աձ	հարցն մերոց ողորմեա: Յերէ. Նոր:	13
29 աձ	Եշ. Սրբոց՝ Որբոցն Որոսման՝ Յու կոբայ առաքելոյն և Յօհաննու Աւետարանչին: Օրէ՝ թէ. Որ յինն յէութեան. առք: Թագաւոր յաւ: Այսօր դասք հրեշ: Մէծ՝ Աստուածածին ամպ: Մէ. և Հինք՝ թէ. Սուր: Որ յանստուեր: Բարբէ: Ծառաբետն պահոյ:	13
30 ակ	Ռւր. ա. օր. պհց. Ծննդ: Հրց՝ Հնդ. ժը 4է. Բանդ Աստուած:	14
31 բձ	Շբ. բ. օր պհց. Ծննդ. Սրբոյն՝ ի Բարաղի. Հայրապետին: և Եղքոր նորին Գրիգորի Նիւսայրցն. Սկզբեստրոսի: Հոօմոյ Հայրապետին: և Սրբայ Եփրեմի խորին Ասորոց: Օրէ՝ 4է. Որ Համանման: Հրց՝ թէ. Աքանելապոմծ. առք: Մէ լուսապայծառ: Լը. լո:	15

Վախճան 1883 թուականի:

006


ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ 0ԴՈՑ

Հաստ Բ Ի Ւ Ս Ի

1883 թ.

ՅՈՒՆՎ. Ո.Բ	ՄՈՒՅԻՒԾ
1 Սաստիկ և սարսացոցիչ հողմ: Հանգերէ զիշեային սաստիկ սաստամանիքով:	1 Ամենաախորժալի օդ, իսկ գիշերները ցաւըտ:
14 Հանգարան, Հանգերը մայութեան արեական:	16 Անձրեն, միջոց առ միջոց:
20 Հողմ, անզային, միջակ անձրեն, իսկ յիսոց առք օդ:	20 Հողմ, անզային, միջակ անձրեն, իսկ յիսոց առք արեական:
28 Խանակապատ հանդական:	28 Խանակապատ հանդական:
30 Հողմային, կարկուտ, ամպային, և Անձրեային կամ խառն եղանակ:	30 Հողմային, կարկուտ, ամպային, և Անձրեային կամ խառն եղանակ:
1 Խստ ձեւու, հոգիային, փոթորիկ, մըրեկ և սունամանիք եւոոյ հանգարան, ամսային և խնաման:	9 Չոր, չափաւոր, ամպային, պարզ, և առք եղանակ:
19 և 26. Սիրոժալի եղանակ և սարսացոցիչ հողմ:	22 Վնձրեային ամպ:
26 Փայլութեան արեական:	26 Փայլութեան արեական:
29 Ամպ հանդերձ որոտմամբ:	29 Ամպ հանդերձ որոտմամբ:
30 ՈՒՆՎ. Ո.Բ	ՅՈՒՆՎ. Ո.Բ
1 Ամպային, խնամա, փոցլումն արեական:	1 Արեամտան առք հողմ:
10 Սիրպապատ:	3, 5 և 9 Փայլութեան արեական:
11 Խստ սաստաման: և հողմ:	10 Սիրոժալի եղանակ հանգեր անձրեային ամպով:
19 և 20 Սաստամանիք, տաք եղանակ և փայլութեան արեական:	17 Սիրոժալի եղանակ:
27 և վլրջերս մա վատ և առը ի սորժալի եղանակ:	22 և 23 Հողմ և անձրեն:
26 և 27 հոգմ և անձրեն իսկ յիսոց, կիմքանաց լու և զանակով:	26 և 27 հոգմ և անձրեն իսկ յիսոց, կիմքանաց լու և զանակով:
1 Թէքփումէ զէսի փոթորիկ և կարկուտ:	0ԴՈՑՏՈՍ
6 Անձրեալի և պտղաբեր եղանակ:	1 Տաք, փայլութեան արեական:
12 Անձրեալ առաւառեան միջութեան:	5 Տեղ անց ամպ, պատութեան:
22 Ցուրտ, որով և կիմքանաց:	10 Զափաւոր առք թիւն:
	14 Հողմ:
	15, 16, 17 Սաստիկ անձրեն

- Հանդերձ որոտմամբ: 27 և 28 Անձը կամ ձիւն.  
 22 Հանդարձ եղանակ: 30 և 31 Փոխութիւն են ամ-  
 24 Տաքութիւն հանդերձ հողմ: պերը ձիւնականին:  
 28 Վաստ հցմնակ: ՆՈՅԵՄԲԵՐ  
 ՍԵԿՏԵՄԲԵՐ  
 1 Մըրեկ հանդերձ հողմով: 1 Սառնամանիք, անձը ւային  
 5 Հանդարձ եղանակ: ասա-  
 տիկ, ճառագլոց և անձրե: 7 Հանդարձ, իսկ յետոյ սառ-  
 7 Հորմ: նամանիք և հողմ:  
 11 Անձրե և ցուքա, իսկ յե-  
 տոյ գէշերները ցուքու: 19 Արեմանեան հողմ հանդերձ  
 24, 26 և 27 Ցուքու: 24 Փայտումն արեգական, հողմ:  
 28 Հողմ և տաք: մշգ, ցուքու և խոնաց  
 ՀՈՅԵՄԲԵՐ  
 1 Փայտումն արեգական: 1 Տաք և ամպայն:  
 4 Մոայի: 9 Պարզ միգապատ:  
 6 և 7 Անձրե: 16 Հանդարձ և ձիւնակ:  
 10 Գիշերները սառնամանիք և 21 Լաւ եղանակ:  
 չօրու: 25 Ցուքա եղանակ, որով և կը-  
 15 և 22 Անախորժ եղանակ: վիթքանաց:  
 23 Զափաւոր և ամպայն:



- ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ Ա.ԶԳԱՅՅԻՆ ԵՒ ԱՅԼ.Ա.ՆՅԻՑԻՑՆ  
 ԵՐՍԻՆԵԱՅ Ա.ՇԽԱԲՐՀԻ:
- Ի ՍՈՒՂԾՄԱՆԵ Աշխարհի մինչեւ ցայժմու է . . . . . Ա.մք.  
 ըստ հաշոյ Առասիայի . . . . . 7583.  
 " Կիլմենայ Աղեքսանդրացոյ . . . . . 7507.  
 " Ֆովլիսայի . . . . . 7398.  
 " Ընդհանուր երրորդացոյ . . . . . 7391.  
 " Ծովիայ Արքիկանացոյ . . . . . 7383.  
 " Բուհ Տոմարի Հայոց . . . . . 7308.  
 " Եպակիսայի Ա. . . . . 7212.  
 " Հոյն Բ. . . . . 7082.  
 " Ցովէժայ Ֆլավիայի . . . . . 6045.  
 " Գևոհիսիայ Ասլումայի . . . . . 5886.  
 " Աւահերիայի . . . . . 5886.  
 " Պէտավիայի . . . . . 5866.  
 " Ակաբեգերեսայի . . . . . 5840.  
 " Հըհից . . . . . 5642.  
 Ի ՍՈՒՂԾՄԱՆԵ աշխարհի մինչեւ է ծնունդն Քրիստոսի  
 ըստ հաշոյ Ընդհ. Տուրու. . . . . 5512.  
 ըստ հաշոյ Բաւ Տօմարի Հայոց . . . . . 5429.  
 " Միթմ տրայ Այշվաննցոյ պատմա-  
 գորդ Հայոց Վարդապետի . . . . . 5202.  
 Ի Գըհեղեղէն մինչեւ ցայժմու է . . . . . 5046.  
 Ի Ակզենտուորութենէ Տէրութ եանս հայոց ի Հայկ. . . . . 3990.  
 Ի պատերազմէն Տրովապայ, ուր մեռաւ վերջն էշխանն  
 հայոց Զարմայը . . . . . 3065.  
 Ի պատերազմէն Աղեքսանդրի Մակելոնացոյ բնդ Գառ-  
 սինի, ուր մեռաւ արքայն հայոց վահէ, սրով վեր-  
 ջացաւ Եշխանութիւն առջմին Հայկազնն . . . . . 2210.  
 Ի Ակզենտուորութենէ Պարուսայ թագաւորութեանս  
 հայոց . . . . . 2629.  
 Ի Տորոգութենէ Վալատըակաց Հայոց Արշակունի թա-  
 գաւորութեանս . . . . . 2082.  
 Ի Ծննդենէ Յիսուսի Քրիստոսի . . . . . 1883.  
 Ի Հայաստաց Արդարու անդրանիկ թագաւորին մերոյ ի  
 Քրիստոս . . . . . 1850.  
 Ի Տիմարկութենէ յաւազին Քրիստոնէական եկեղե-

ցւոյն Հայոց, որ ի Անդեսիայ . . . . .	1851.
ի Ճեմանալբաթէնէ լաւաշին Եպիսկոպոսին Հայոց, և Թագէսահ առաքելուց . . . . .	1851.
ի Ճննդէնէ Լուսաւորչին մերոյ որբոյն Գրիգորի . . . . .	1626.
Յելիցն որբոյ Լուսաւորչին մերոյ և վերասէն և լու- սաւորութէնէ Սպզի Հայոց . . . . .	1582.
ի շնութէնէ արբոյ կըմիածնի . . . . .	1580.
ի Նիկոլոյ Ա. Ժողովայի . . . . .	1558.
ի Կ. Պոլոյ Ա. Ժողովայնու . . . . .	1502.
ի Խնիւտոսի Ա. Ժողովայի . . . . .	1452.
ի գիւտոյ զցոյ Հայկական . . . . .	1473.
Թարգմանութէնէ Ասսուածայութէ զրոյ և Հայ բարբառ . . . . .	1472.
ի Բարձմանէն Արշակունեաց Հայոց թագաւորութէնան . . . . .	1455.
ի Խոհասակութէնէ 1036 որբոյ Վարդանանց քաջա- մարմիկ Հայկազննան . . . . .	1432.
ի Խորսութէնէ Տօմարիս մերոյ . . . . .	1332.
ի բաժանմանէ վրաց և Հայոց . . . . .	1295.
ի Ակղբնաւորութէնէ թագաւորութէնաննանց պաշտ- մինչ ցայժմնէ . . . . .	1021.
ի յերսրգէ նորոգութէնէ թագաւորութէնան Հայոց Բաղ- բառունեաց յիշանոյ մ.ծէ . . . . .	998.
ի յընդունելութէնէ Առուսասանեաց Գրիստոնէական ուղղափառ Ա. Կըռնի . . . . .	895.
ի Ծորսորդ նորոգութէնէ թագաւորութէնան Հայոց Խոհեմանեաց ի Աննէ Առուբնեանց . . . . .	685.
ի գիւտոյ զիտակին . . . . .	615.
ի Ակղբնաւորութէնէ թագաւորութէնան Օսմաննան մինչ ցայժմնէ . . . . .	583.
ի գիւտոյ կազմնացուցին . . . . .	581.
ի Կործմանէ Անի քաղաքին . . . . .	564.
ի Բարձմանէ թագաւորութէնան մերոյ որ և Ակելիկայ . . . . .	510.
ի գիւտոյ թթարբնութէնան . . . . .	510.
ի յարշաւելոյ Լանիթ ամուրաց և Հայաստան . . . . .	496.
ի գիւտոյ ասքազմութէնան . . . . .	443.
ի Վերջն ուղղափառութէնէ և մերժաստասութէնէ ամենայն Հայոց Ընդհանուրական հայրապետական Աթու- ռոյ և Ա. Էջմանէն Վազմաշապատ . . . . .	440.
ի Ակղբնաւորութէնէ Պատրիարքութէնան Հայոց ի Կոս- տանիկ ամոլիս, ի Յովանիմայ Կայիսրական Պրուսացու	420.

ի գիւտոյ Ամերիկայի . . . . .	391.
ի գիւտոյ Ժամանոցի . . . . .	382.
ի Ակղբնաւորութէնէ ապակութէնան Հայկական տառելց . . . . .	318.
ի բարձմանէ Եշանութէնան կոմը Եշանութէն Հայոց Դա- ւիթ—Բէզկէ . . . . .	153.
ի գիւտոյ օդապարիկ զնլի . . . . .	101.
ի գիւտոյ շովենաւի . . . . .	79.
ի շնութէնէն Կազմական Հայկական Ճեմարանի Արե- ւելան լեզուոց ի Մարգուա . . . . .	67.
Յառմանէն Ազգային Հայկագույն Դայկանաց Կորին . . . . .	56.
ի Ներսոնէ Արքեպիսկոպոսի . . . . .	58.
Յացելութէնէ Օգոստավան մեծի Կայութ Անիկովոյունի ասկմանաց հայաստանիկ և այլց . . . . .	46.
ի գիւտոյ լուսամնակիր . . . . .	44.
ի բացմանէն Գասպարանհաւագասանովի, վասն մա- տակարանելոյ հայազգի անանկաց որ ի Մարգուա . . . . .	42.
Յացելութէնէն Օգոստավան մեծի Կայութ Անիկովոյունի Բ. սահմանց հայաստանի այլց . . . . .	39.
ի Հաստառութէնէն Մարդասիրական ընկերութէնան յա- նունն Սըրբյն Գրիգորի Առասաւորչին մերոյ որ ի Բագու- թացմանէ Ժառմանին ապակութէն Կայութ ի Մարգուա . . . . .	20.
ի Բացմանէն Ժառմանին ապակութէն Կայութ քերու- թովից . . . . .	18.
ի Հաստառաբարութէնէն , Աթոն Հայոց ամանդելոյ յերա- սաղէմի . . . . .	18.
ի շնութէնէն և ի Հաստառութէնէն, Հեռութէնան երկու թակարանացն որ առ կեց Տաճարին օրըն կըմիածնի . . . . .	15.
ի մերանիրացմանթէնէն Տաճարին կայութ կըմիածնի ի Տ. Տ. Գէրոգայ Գ. Որբագնակոյն Կամբուղիկոսէ ամենայն Հայոց . . . . .	15.
ի Հաստառաբարութէնէն, Աթոն Հայոց ամանդելոյ Ա. Էջմանէնի . . . . .	16.
ի շնութէնէն Ճեմարանի սրբոյ կըմիածնի . . . . .	13.
ի Կըռնի այցելութէնէն Օգոստավան մեծի Կայութ Ա. Եջմանիկը Բ. Գալատանի և Վ. Րաստանի . . . . .	12.
ի Ուսուական Տաճարին պատրիարքութէն . . . . .	7.

**ՄԵԾԱՀՍ.ՆԴԻՍ Ս.ԻՈՒԹՎ  
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԻՑ ԵՒ ՏՕՆԱԽՄՐՈՒԹԵԱՆ  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՅՈՒՏԻՆ ՌՈՒՍԱՅ  
Խոաշտիչ ✚ օրերն աղաք էն առէնտիւն և դապուս-  
տանական պարագաներից:**

- ՅՈՒՏԻՆ. Ա. կ. Բ. Մ. Խ. Աղեքայ Աղեքսանդրովէ և Մ.  
Խշանականէ Ելենի Պալովինի:  
6 ✕ ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՆԻ:  
10 ՄՆ. Ն. կ. Բ. Մ. Խ. Եղայ Պալովայինչի:  
17 ՄՆ. Ն. կ. Բ. Մ. Խ. Ելենայ Վաղիմիրովինա:  
24 ՄՆ. Ն. կ. Բ. Մ. Խշանականեր Ինենի Աղեքսանդրովի:  
ՓԵՏԻՎ. Օ.Բ.
- 2 ✕ Տեալելիդառաջ:  
3 ՄՆ. Ն. կ. Բ. Մ. Խ. Նիկոլայ Կոնստանդինովի: Տօն անգ.  
Նշանի Ա. Սնայրի:  
4 ՄՆ. Ն. կ. Բ. Մ. Խշանականեր Եղայ Կոնստանդինովի:  
25—26 ✕ Օւր. և Շը. Պանքռունից առաջ ան ան ան ան ան:  
26 ✕ ՄՆ. Ն. կ. Բ. Օգոստաֆառ Կայսեր ԱՂԵՔՍՈՒՆԻՐ  
ԱՂԵՔՍՈՒՆԻՐՈՒԳԻ:

## ՄԱՐՏ

- 1 ✕ Բաղդիլն ի զա՞ր. Ն. կ. Բ. Մ. ԿԱՅՍԵՐ ԱՂԵՔՍՈՆԻՐ  
ԱՂԵՔՍՈՆԻՐՈՒԳԻ:  
25 ✕ Պ.ԿՐՏՈՒՄՆ. և ՄՆ. Ն. կ. Բ. Մ. Խշանականեր Կանչ  
Աղեքսանդրովինի:  
ՈՊՐԻՆ.  
1 ՄՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մեծ Խշանակ Ա. Ա.  
Եղեքսանդր Միխայիլովի:  
10 ՄՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մ. Խ. Վարդի  
Ալբայ Աղեքսանդրովի:  
14 ՄՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մեծ Խշանակ Նել  
կուլայ Միխայիլովի:  
15 և 16 ✕ Օւր. և Շը. Զարչաքանաց օրեր:  
17—23 ✕ Զատկական Խօժնեակ:  
17 ՄՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մ. Խ. Նիկոլայ Միխայելով:

- 28 Անուանակութեմի Ն. կ. Բ. Բ. Թագաւոհեաց և Մեծ Խշան-  
ակութեաց Աղեքսանդր Եօսիփովինայ և Աղեքսանդր Եօսիփովի:  
27 ՄՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մ. Խ. Վարդի Աղեքսանդրովի:  
29 ✕ ՄՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մ. Խ. Վարդի Աղեքսանդրովի:

## ՄԱՐՏԻՄ

- 2 ՄՆ. Ն. կ. Բ. Մ. Խ. Մարիայ Պաւրինայ:  
6 ՄՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մեծ Խշանակ  
Նիկոլայ Աղեքսանդրովի:  
9 ✕ Բերումի Նշխարաց Ա. Նիկողայոսի Արանիշեաց:  
15 Ն. կ. Բ. Մ. Խ. Թմբուրեաց Կոնստանդինովի:  
20 ԱՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մեծ Խշանակ Ա-  
լեքովի Աղեքսանդրովի:  
21 ԱՆ. Նոյն Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մեծ Խշանակ  
Կոնստանտինաց Նիկոլայինչի, և Կոնստանդինովինայ Կոնստան-  
տինովի և Մեծ Խշանականի Ելենայ Պաւրինայ և ՄՆ. Ն.  
կ. Բ. Բարեկապաշտ Թագաւոհեաց և Մեծ Խշանակութեաց Ա-  
ղեքսանդր Պետրովի:  
26 ✕ Համբարձումի:

## ՅՈՒՆԻՄ

- 1 ՄՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մեծ Խշանակ Գը-  
միուրեաց Ունատանենովի:  
5 ✕ ՀՈԳԵԳԱԼՈՒՄ:
- 26 ՄՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւոհեաց և Մեծ Խշանակ Ա. Ա.  
Եղեքսանդրի Եօսիփովի:  
26 ✕ Սըրոց Աւարելցն Պետրոսի և Պաղոսի ԱՆ. Ն. կ. Բ.  
Բարեկապաշտ Թագաւոհաց և Մեծ Խշանակ Պաւլոյ Աղեք-  
սանդրովի և Պետրա Նիկոլայինչի:

## ՅՈՒՆԻԼ

- 1 ՄՆ. Ն. կ. Բ. Մ. Խ. Ա. Ա. Խաչեպատաց Կոնստանդինովի:  
5 ԱՆ. Ն. կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մեծ Խշանակ  
Ալեքովի Աղեքսանդրովի:  
11 ԱՆ. Ն. կ. Բ. Մ. Խ. Խշանակութեաց Օլգայ Ֆէտորովի:  
15 ԱՆ. Ն. կ. Բ. Մ. Խ. Վարդի Վաղիմիրայ Աղեքսանդրովի:  
16 ԱՆ. Ն. կ. Բ. և Մ. Խ. Վ. Խշանակ Ստեփան Բարեկապաշտ Թագաւ-  
ոհեաց Անաստասի Աղեքսանդրովի:  
22 ✕ ԱՆ. Ն. կ. Բ. Ա. Այսիկը Հուռ Մարիայ Ֆէտորովինի. Ն. կ.

- Բ. Ամենավաղստեր՝ Մարիայ Ալեքսանդրովիչը, և Մ. Էշխանուհայոյ՝ Մարիայ Նվիզուայելին:
- 27 Ծն. և. Ա. Ն. Ն. Կ. Բ. Անվարակալիչը անդրանիկն, և Ա. Ն. Ն. Կ. Բ. Նվիզուայ Նվիզուայելիչը կրտսելը յանձնութեալ ՕԳԱԽՍԹ:
- 1 Մազում պատուական փայտին Ա. Խաչի:
- 6 ✕ Ա. Հայկերգութեան Քրիստոնի:
- 10 Ծն. Ն. Ա. Բ. Մ. Էշխանի Կանստանիկն Կանստանդինովչի:
- 11 Ծն. Ն. Ա. Բ. Մ. Էշխանի Կանստանիկ Միլիացելովչի:
- 15 ✕ Վ. Երախոսամեմն Ա. Աստուածածին:
- 16 Ծն. Ն. Ա. Մ. Էշխանուհայոյ Ակնառարինի Միլիացելովչի:
- 22 Ծն. Ն. Կ. Բ. Ուզայ Կանստանին Անվանի:
- 29 ✕ Գիլբասում Յանշանու Միլիացին:
- 30 ✕ Ա. Ն. Ն. Կ. Մ. Ողագոսական Կայսեր ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼԵՔ-  
ՍՈՒՆԴՐՈՎՉԻ և Ն. Ա. Բ. Մ. Էշխանի Ալեքսանդր Միլիացե-  
լովչի Ծն. Ն. Ա. Ուզայ Նվիզուայելին: Տօն ապաւութե-  
ան Ա. Անվանդը Նվիզուայելին:
- ԱՅՍՏԵՄԲԵՐ
- 8 ✕ Ծն. Ա. Աստուածածին ի յանայչ: Ծն. Ն. Կ. Բ. Մ. Էշ-  
խանուհայոյ Ուզայ Փէզուորմին:
- 9 Ծն. Ն. Կ. Բ. Մ. Էշխանի Կանստանդին Նվիզուայելիչի:
- 11 ✕ Խ. Ձ. Ա. Բ. Մ. Էշխանականեր՝ Վերայ Կանստանդինովչի:
- 17 Ծն. Ն. Կ. Բ. Մ. Էշխանի Պատիք Ալեքսանդրովչի: Սն. Ն.  
Կ. Բ. Մ. Էշխանի Պատիք Ալեքսանդրովչի:
- 21 Ծն. Ն. Ա. Բ. Մ. Էշխանի Պատիք Ալեքսանդրովչի: Սն. Ն.  
Կ. Բ. Մ. Էշխանի Պատիք Ալեքսանդրովչի:
- 25 Ծն. և. Ա. Ն. Ն. Ա. Բ. Մ. Էշխան Անրգեայ Միլիացելովչի:
- 26 ✕ Ա. Աւելաքանելու Յանշանու Միլիացելովչի:
- 30 Ծն. Ա. Կ. Բ. Մ. Էշխանի Անրգեայ Ալապեմիրելիչի:
- ՀԱՅՍՏԵՄԲԵՐ
- 1 ✕ Պաշտպանութեան Ա. Աստուածածինի:
- 2 Ծն. Ն. Կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի և Մ. Էշխանի Ան-  
րգեայ Միլիացելովչի:
- 5 Ծն. Ն. Կ. Բ. Էշխանական Անրգեայ Անրգեայ Բարեկապաշտ:
- 13 Ծն. Ա. Կ. Բ. Մ. Էշխանի Միլիացել Անրգեայ Անրգեայ:
- 22 ✕ Օր պատկերին Ղաղանու Ա. Աստուածածինի:
- ԱՅՍՏԵՄԲԵՐ
- 6 Ծն. Ն. Կ. Բ. Մ. Էշխան Նվիզուայ Նվիզուայելիչ Կրտսելի:
- 8 Ա. Ն. Կ. Բ. Մ. Էշխանայ Միլիացել Անրգեայ Անրգեայ և Ա. Մ. Էշ-  
խան Միլիացելովչի: Տօն ամենայն ասպասութիւն Կշանուց:

- 12 Ծն. Ն. Կ. Բ. Մ. Էշխանի Յօրիսայ Վարդիսիրելիչի:
- 14 Ծն. Ն. Կ. Բ. Բարեկապաշտ Թագաւորի Ժամանակակիցն Ա. Էշ-  
խանուհայոյ՝ Մարիայ Ֆէզուորմին:
- 21 ✕ Երից ամաց Ընծայումն Ա. Աստուածածինի և առանձին:
- 24 Ա. Ն. Ն. Կ. Բ. Մ. Էշխանուհայոյ Ականուրինի Միլիացելովչի:
- 26 Ա. Ն. Ն. Կ. Բ. Մ. Էշխանայ Գէրոքիս Ալեքսանդրովչի: և  
Գէրոքիս Միլիացելովչի:
- ԿԱՅՏԵՄԲԵՐ
- 6 ✕ Ա. Նվիզուայուի պահելին: Ան. Կ. Բ. Մ. Էշխանայ Նի-  
կուայ Ալեքսանդրովչի Նվիզուայ Կանստանդինովչի և Նի-  
կուայ Միլիացելովչի:
- 16 Ծն. Ն. Կ. Բ. Ալեքսուի Միլիացելովչի:
- 22 Ա. Ն. Կ. Բ. Էշխանականեր՝ Անրգեայ Միլիացելովչի:
- 25 ✕ Ծն. Քրիստոնի:
- 26 և. 27 ✕ Աւարք Ծնիդ: Քրիստոնի:
- ԲԱԿԱՆ
- 
- Տունն Ուռաւաց
- ՆՈՐԻՆ ԿԱՅՍԻՐՈՒԾՈՆ ՄՐԵՑՈՒԹ. Ա.Ա.Նաբարեկապաշտ Թագաւոր-  
ուր և նորակալ Կ.Յ.Յ. Ամենայն Ռաւաց ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼ.Յ.Բ-  
ՐՈՒՆԴՐՈՒԱ. 19 Ծն. 1845 ա. 26 Փետր. 38 մ. Ն. Կազմեանին  
ՄԻՃԱԾ. Ա.Ա.Նաբարեկապաշտ Թ.Յ.Գ.Ա.Խ. և Կազմեանի Մ.Յ.Մ-  
Յ.Յ. Ֆէրար. Ա.Յ.Յ. 19 Ծն. 1847 ա. 14 Նոյ. 36 մ. Օրդեր նոցին  
1. Կ. Կ. Բ. Բարեկապաշտ Թագաւոր Արքայածառանդ և Ա. Կ.  
Յ.Յ. Ա.Յ.Յ. Ա.Լ.Յ.Բ.Յ.Ն.Դ.Բ.Բ. Ծն. 1868 ա. 6 Սպր. 2. Ն. Կ.  
Բ. Բ. էլ. Գէրոքի Ալեքսանդրովչի: Ծն. 1871 ա. 27 ապր. 3  
Կ. Կ. Բ. Ա. էլ. Կայսեր Ալեքսանդրովչի: Ծն. 1875 ա. 28  
մար: Էղբարք Ն. Կ. Ա. ա. Կ. Բ. Ա. էլ. Վագեմիր Ալեք-  
սանդրովչի: Ծն. 1847 ա. 10 ապր: ամեռ. Կ. նորդին Կ. Կ. Բ.  
Ա. էշ. Մարիայ Ֆէզուորմին Պատուիսա արքայածառանդ Միլիաց-  
լով Շէքենակալով: Արքենոց: Ա. Կ. Յ. Բ. էլ. Կ. նորդին Վ. լազիմ-  
չութ: Ծն. 30 Ապր. 1876 ա. Կ. Բ. Ա. էշ. Մ. էլ. Կ. նորդին Վ. լազիմ-  
չութ: Ծն. 1877 ա. Կ. Բ. Ա. էշ. Մ. էլ. Կ. նորդին Վ. լազիմ-  
չութ: Ծն. 1850 ա. 21 Մայ: 4. Կ. Կ. Բ. Ա. էշ. Ա. էլ. Կ. նորդին Վ. լազիմ-  
չութ: Ծն. 1855 ա. 5 Հոկտեմբերի ամենացածր ընդ Կ. արք. Բ. աւրագորդի Ա. Վ. Վ. էլ. Վ. լազիմ-  
չութ: Հօր Էղբարք Ն. Կ. Ա. 6.

1. Ե. Կ. Ա. Բ. Իշ. Կոնսուլատորի Նվելուցիք: Ծն. 1824 ա.  
9 Սեպտ. ամսութիւն նորին. Ե. Կ. Բ. Ա. Իշ. Ուկանդալու նոր-  
ֆումս: Ծն. 1830 ա. 26 Յունի: Խախինն արքայագուստը Սակ-  
ունն Արքէնքուրպայի: Որդէք նորին: ա. Կ. Բ. Ա. Իշ. Նի-  
կոլայ Կոնսուլանդինվիչ: Ծն. 1850 ա. 2 Փետրի բ. Ե. Կ. Բ.  
Ա. Իշ. Կոնսուլաննին Կոնսուլաննինվիչ: Ծն. 1858 ա. 10 ապր:  
գ. Ե. Կ. Բ. Ա. Դավթը Կոնսուլանդինվիչ: Ծն 1860 ա. 1 Յունի:  
գ. Ե. Արքայական Ա. Օլբայ Կոնսուլանդինվիչ: Ծն. 1851 ա.  
22 Օգոստ: ամսունացեալ ընդ Ե. Արքայական Ա. Գէրգիթանց.  
հ. Ե. Կ. Բ. Ա. Իշ. Վերայ Կոնսուլանդինվիչ: Ծն. 1854 ա. 4  
Փետր ամսունն 1874 ա. ընդ Ե. Արքայ Բ. Գևորգ Վերանձմբերգ-  
սկայի Վելէլմայ եւզինի: 2. Ե. Կ. Բ. Ա. Իշ. Նվելուց Նվելուց-  
յինիք: Ծն. 1831 ա. 27 Յուն ամսութիւն նորին: Ե. Կ. Բ. Ա. Իշ.  
Ուկանդալու Պետրովստա: Ծն. 1838 ա. 21 մայ. Խախինն արքա-  
յան առ. Օրդէնքուրպ. Օրդէք նորի: ա. Ե. Կ. Բ. Ա. Իշ. Նիկո-  
լայ Նիկոլայինվիչ: Ծն. 1856 ա. 6. Խախին. բ. Ե. Կ. Բ. Ա. Իշ.  
Պիտօր. Նիկոլայինվիչ: Ծն. 1864 ա. 10 Յունի: 3. Ե. Կ. Բ. Ա. Իշ.  
իշ. Միլայշէ Նիկոլայինվիչ: Ծն. 1832 ա. 13 Հոկտ. ամսութիւնց.  
Ե. Կ. Բ. Ա. Իշ. Օլբայ Ֆէոդորովստ: Ծն. 1859 ա. 8 Սեպտ: Խախ-  
ասանկութիւն Բագենու: Օրդէք նորին: ա. Ե. Կ. Բ. Ա. Իշ. Նիկ-  
ոլայ Միլայշէ ինվիչ: Ծն. 1859 ա. 14 ապր. բ. Ե. Կ. Բ. Ա. Իշ.  
Կոնսուլանց Միլայշէ լուժիստա: Ծն. 1860 ա. 16 Յուն գ. Ե. Կ. Բ.  
Ա. Իշ. Միլայշէ Լ Միլայշէ լուժիք: Ծն. 1861 ա. 4 Հոկտ. գ. Ե. Կ.  
Բ. Ա. Իշ. Գէօրգի Միլայշէ լուժիք: Ծն. 1863 ա. 11 Օգոստ հ. Ե.  
Կ. Բ. Ա. Իշ. Միլայշէ լու Միլայշէ լուժիք: Ծն. 1866 ա. 1 ապր. զ.  
Ե. Կ. Բ. Ա. Իշ. Միլայշէ Միլայշէ լուժիք: Ծն. 1869 ա. 8 Հոկտ. է.  
բ. Ե. Կ. Բ. Ա. Իշ. Միլայշէ Միլայշէ լուժիք: Ծն. 1865 ա. 16 Գետմ:  
մ. Ե. Ա. Արք. Բ. Օլբայ Նիկոլայինվիչ: Ծն. 1822 ա. 30 Օգոստ: ա-  
մուսն. ընդ Ե. Կ. Բ. Վերանձմբերգսկի արքայի Ֆըլտրինի Ա-  
մուսնութիւնի:  
հ. Ե. Կ. Բ. Ա. Իշ. Տօմահովսկի Դուքսը. և Դքսունիք Եկատերինուրպի:  
ա. Ե. Իշ. Նիկոլ. Մականինիւնանվիչ: Ծն. 1843 ա. 23 Յուն:  
բ. Ե. Իշ. Եւգին. Մականինիւնանվիչ: Ծն. 1847 ա. 28 Յունի:  
զ. Ե. Իշ. Գէօրգ. Մականինիւնանվիչ: Ծն. 1852 ա. 17 Փետր:  
դ. Մարիայ Մականինիւնանվիչ: Ծն. 1841 ա. 4 Հոկտ. Ամենաց.  
ընդ Ե. Ա. Արք. Բ. Արքայուրպայ Վելէլմայ թագէնուկոյ:  
ե. Ե. Իշ. Եւգինիայ Մականինիւնանվիչ: Ծն. 1845 ա. 20 մարտ:  
ամուսն. ընդ Ե. Կ. Արքայուրպ Աւկանդալը պիտովսէ Օլբէն-  
քուրպսկոյ:

ա. Ե. Կ. Բ. Ա. Իշ. Ականինիւնայ Միլայշէ լուժիստա: Ծն. 1827 ա. 16  
Օգոստ: Ամուսն. ընդ Ե. Կ. Դուքս Միլայշէ լուժու—Արքիլուիմի:

Յաւելուածք 1883-թ.

ՕՐԱՅՈՒՅԻ.

# ԾԱՇԽ ՇՆՏԱՆԵԱՅ

ՈՒԹՆԵՐՈՐԴ ՏՈՒԹ.

ԽՄՐԱԳԻՐ ԵՒ ՀՐԱՑԱՐԱԿԻԶ

Ա.Բ Գ. Ա. Ա. ԳՈՒԼ. Ս. ՄԻՒՐԵՍ. Ն. Յ

163.

Ա. Ա. ԳԵԼՈՉԱԿԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏ Ն  
ԵՒ ԿԱԹՈՒՊԻԿՈՍՆ Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

## ՍՈՒՐԲ ՅՈՒՍԻԿ.

Պատրիարք առ պատրիարք Օլբայուցի սկզբան:



Ա. Ա. ԳԵԼՈՉԱԿԱՆ. ԶՕՐ և Ճննատուն հայրա-  
պետական ամենայն Հայոց, սուրբն Յու-  
սիկ՝ կրտսեր որդին կը առաքելաշնորհ

Ա. Վրթանիսի \*); Ան ամենայն առաքինութեամբ բոլորովին նման էր իւր հօրը և եղբօրը - Դրիգորիուն, որ Աղուանից Կաթու զիկոսն էր; Յուսիկը և իւր եղբայր Գրիգորը, որ երկուորեակ էին՝ իրենց պատաննեկութեան օրերը իմիասին անցուցին իրենց հօր-Ա. Վրթանիսի մօտ Կեսարիայում: որը իւր հայրական զթութեամբ անդադար կրթում էր և ուսուցանում ամենայն խոհեմութեամբ և ամրիծ քաղաքավարութեամբ, մինչև որ սերմանեց նրանց սրաերի մէջ, հոգեսոր գպրութիւնների բոլոր հրահանդները և առաքելական Հայաստաննայց Ա. Եկեղեցւոյ հմանքը: Յետոյ իմիասին իւրեանց հօր-Ա. Վրթանիսի հետ բերին Հայաստան: Ա. Յուսիկը ամուսնացաւ, փեսայանտլով Տիրանայ Հայոց թագաւորին, բայց նա երկար չմնաց ամուսնական կապով, այլ՝ երկու որդի ունենալուց յետոյ՝ որոնց անուաննեն էին, Պապ և Աթանազինէ, Հրամատուեց իւր կնօջից, և աշխարհային բոլոր զուարձութիւններից, ու միանձնանալով սկսեց պարսպել խիստ աղօթիք և ձգնութեամբ: Նա սկսեց խոր քննութեամբ մանրամասնաբար ընթերցասիրել Աստուածային սուլր զրբերը. և այսպէս հոգեկան զուարձութեամբ անցուցնում էր իւր օրերը:

(\*) Տե՛ս, Ծա, Ընաւութեամբ 1882 թ. 116 յառ. 282 էրես:

Ա. Հայրապետն Վրթանէս, Ա. Գրիգորի աթոռը մը նաց թափուր: Եւ որովհետեւ Հայկական տմբոխը քաջ տեղեակ էր Ա. Յուսիկան առաքինափայլ բնաւորութիւններին և ձգնութիւններին՝ վասնորյ միահամուռ ընարութեամբ բազմեցրին Հայրապետական աթուն Ա. Գրիգորի. որ եղեւ հայրապետ և կաթուղեկոս ամենայն Հայոց:

Ա. Յուսիկը այնուհետեւ սկսեց առաւել ևս բնթանալ առաքինութեամբ. իրաւ հաստատութեամբ պարհպանեց եկեղեցական բոլոր կարգերը և կանոնները, և մշտամառնէ աղօթիւք փայլում էր նա սքանչելի սրբութեամբ: Սակայն նորա որդիքը, չընմանուեցին իւրեանց սրբազումար նախանձելի տոհմին, որոնց մասին՝ նա խիստ ստուիկ տեղերիվում էր և տուղրվում գիշեր և ցերեկ. չնայելով նորա բոլոր տքնութեանց՝ որ միշտ և հանապազ խրատում էր, համոզում էր և քարոզում... բայց բոլոր ի գոր այլ՝ նոքա հետեւում էրն իրենց մայրական տոհմին:

Որա ժամանակա՝ ուրացող Յուլիանոս կայսրը ու զարկեց Հայաստան իւր պատկերը, որ ուրաւական և շիւական նմանութեամբք տախտակի վերայ նըկարուած էր, համաձայն հեթանոսական պաշտաման. Հրաման տալով Տիրանայ Հայոց թագաւորին՝ որ այդ պատկերը մէծ պատուով բազմացնէ իւր արքայ-

ական եկեղեցում արևելեան կողմումը։ Աւ որովհետեւ, Տիրան թագաւորը վատասիրտ էր և անպիտան, ևս և հակառակամիտ էր առ Աստուածապաշտութիւնը՝ յանձն առաւ կատարել ուրացող Յուլիանոսի անարժան գործը, բերեց այն դիւական և ուրուական պատկերն Ծոփաց գտաւան, և մացրեց իւր արքայական եկեղեցին որպէս զի կանգնացնէ այնտեղ։

Ահա այս միջոցում, ավենուազարմ Հայերը շտապելով փութացին յայտնել Ս. Հայրապետին Յուսկան, որը լսելուն պէս՝ իսկոյն վաղեց նոյն իսկ եկեղեցին և հասաւ թագաւորի մօտ, մինչդեռ պատկերը նորաձեռքումն էր. սուրբ Հայրապետն սկսեց զանազան համոզական խրամներով, մերթ սիրով, մերթ սաստկութեամբ, քարողել որ յետ կենայ այն հեթանոսական դիւակաշտութեան գործերից, որպէս զի չը պղծուի ինքը, և չպղծէ Ս. եկեղեցին։

Թագաւորը ոչինչ ուշադրութիւն չդարձրեց; Այն ժամանակ Ս. Յուսիկը, սաստիկ վշտամնալով, իսկոյն յափշտակեց թագաւորի ձեռքեց այն դիւական պատկերն և անարդանօք քցեց գետին իւր ոսների տակ, և քաջութեամբ տրորելով ջարդու փշուր արեց։

Տիրանը տեսնելով այս բոլորը, սկսեց կատաղարար բարկանեալ յիշեց նաև ևս իւր մոքում, Ս. Հայրապետի, որիշ շատ յանդի մանութիւնները իւր

անկարգութիւնների համար, հրամանեց սաստիկ գաղանութեամբ երկար ծեծելով քաշ տալ մինչև որ, Քրիստոսի առաքելնի ոուրբ նահատակն աւանդեց իւր հոգին, իւր վեցամեայ կաթուղիկոսութիւնց յետոյ։

Ահա այս սարսափելի անցքը, ամբողջ Հայ ժողովդին մինչ այն աստիճան վերաւորեց և վշաացրեց՝ որ բոլորը սկսեցին գաղտնապէս երկար միջոց մեծ սուգ պահել միշտ և հանապաղ անիծելով դիւասիրտ զեղիսացեալ Տիրանին։ Խսկ պատուական մարմինն սրբոյն՝ մեծ բազմութեամբ և պատուվ տարան ի Թորգան, և իւր հօր մօտ թաղեցին տմենացքեղ հանդիսիւ։

Ահա հրատարակելով ընդ սմին՝ երանելի սուրբ նահատակին Քրիստոսի Յուսկան փառաւոր պատկերը և պատմութիւնը. յոյս ունենք, որ մեր Հայ ամբուլ քաղցր սիրով կընդունէ. սպա ուրեմն, և թող այդ չնաշխարհիկ պատկերը և նորա կենդանի անմահ անունը սիրալիք ընդունելութեամբ մուտքործէ ամեն մի Հայի բնակարան. պատմելով մեր ընտանեաց, գերդաստանաց և ծաղկափթիթ զաւակաց։

164 Հ Ա Յ Ե Լ Ա Խ Կ

Փոքրէկ տեսակ բաներ կան,

որ մոնում են հողի մէջ՝

յանկարծ տեսար գորս եկան՝

և լցուեցէն այդ պ մէջ:

Բայց առաջ լրի առ պարի:

Անցեալ տարուայ - 1882 թ. 117 համարաւ Ա.  
հանելուկն էր՝ Օլի: Խոկ 118 հ. թ. հանելուկն էր  
Մաշեն:

165 Հ Ա Յ Ե Ն Ե Ա Յ Հ Ա Մ Ի Թ Ի Ւ Ն Ե Ր Ի Յ Յ Ե Տ Ս Ո ւ ն Ա լ ի ն Ե Ր Կ Ո Յ Յ Ժ Ա Մ Ա Ն Ա Մ Ի Մ Յ :

Տեղւոյս (Յուլանայ), Ասպառիւելուեցան անուանեալ  
փողոցի վերայ Ս. Պետրոս և Պողոս Եկեղեցոց ոչ  
հեռի, ձախ կողմօն մը քանի մի տարի առաջ, կար  
մէկ տուն իւր փոքրիկ բակով. որի քամակը պար-  
ակէլ էր, և ողը պատկանում էր մէկ Պարսկի: Այս  
տան քամակը որ նայում էր պարտիզին և փողոցն՝  
արդէն յոյժնի էր, որ այդ տեղը հնումը Հայոց  
եկեղեցի է եղել որովհետեւ պարզ երկում էր սրբա-

տաշքարերով շինած կիսակոյով մ.ծ սեղանի յետին  
պատը: Այդ պարակով քանի մի տարի առաջ գնեց  
Պարսկից հանգուցեալ Մնացական Գալուտեանցն, որը՝  
բոլորը քանդելով՝ բացուեց և երեաց եկեղեցւոյ  
ընդարձակ համբար, կրով և կոփածոյ քարերով շինած,  
որի զիրքը բաւականին մեծ էր. նա շինեց իւր հա-  
մար շինութիւն, որով բալորովին անհետացաւ եկե-  
ղեցւոյ հետքը...:

Խոկ տունը իւր փոքրիկ բակովը հանդերձ, գնեց  
նոյնպէս մէկ Հայ մարդ, — Գալուտատ Մահասի Մկրտ-  
չան անուամբ նորքեցի: Մայիսի 20 նի 1881 թ.  
մէնք անցնելով այդ մեր փողոցից՝ տեսանք որ քա-  
րուքանդ են անում այդ հին շինութիւնները. մէնք  
ստուգիկ հետաքրիրուելով մօտեցանք նայելու, յան-  
կարծ երեաց մեր առաջին այդ հայրենեաց հնա-  
թեան նուրական սուրբ նշանները. — Եկեղեցւոյ մ.ծ  
սեղանի պատը, որ այդ տան տակն էր մնացած,  
որպէս նկերնատուն, մէնք դառնալով գէսպի քանդով  
մշակներից զլսաւորին՝ որ մի պարսիկ էր, յոյժ  
թափանականք խնդրեցինք որ պատմէ մ.զ այդ տեղի  
մասին, կամ գոյցէ արձանագրեր, տապանագրեր  
գուրս եկած լինին ցոյց տայ: Նա լինելով այնքան  
բարի, պատմեց մէկ հետեւելը: Թէ հա նզուցեալ  
«Մնացականը իւր անելը շինելուս՝ դտաւ մէկ մ.ծ

«արձանագրած քար \*), և կարծեմ պահեց, բացի  
այդ՝ ևս շատ տարի է որ այս տանը քիրայով մը-  
նում էի իմ ընտանիքով, մենք զիտէինք որ այս  
տեղը հայոց Նկեղեցի է եղել որովհետեւ ներքնա-  
տանը մենք նշմարում էինք ամեն ձեր կիրակնա-  
մուտ երեկոները փայլող լոյս, ուստի և մենք շատ  
յարգանքով էինք մնում և մաքուր պահում և այլն:  
«Նատ բարի, եթէ քանդելուս որեւիցէ մէկ բան երե-  
այ՝ իսկոյն կհացնեմ ձեզ միամիտ եղէք:» Ցեսոյ  
պատահեցինք տան տիրօջ Հային, որին խնդրեցինք  
նոյնպէս շատ բաներ... նա ևս խոստացաւ որ քան-  
դելուս զգուշութեամբ նայեն և այլն: Բայց յետոյ  
տեսանք որ այլ ևս կէսից աւելի չեն քանդել այլ  
նորից պատեն գրել նորա վրէն, ուստի և ոչի՞նչ  
չկարողացանք տեսնել և գտնել: Այդ սեղանի պա-  
տից քանի մի քայլ հեռու, գուրս էին եկել կարաս-  
ներ. երեաց որ, այդ եկեղեցւոյ խորանների տեղեր-  
նեն, ուր հնումն միշտ լինում էր խորաներում ձի-  
թի կարասներ, և որոնց մէջ միշտ լիքն էին լինում  
եկեղեցում վառելու համար ձեթ:

Մենք շատ ենք ցաւում, որ չկարողացանք որե-

(\*) Այս արձանագրի մասին մենք իսկոյն դիմեցինք խնդրանոք հանդ.  
Մասականի կնաջը, որից սուացանք բացասական պատասխան իւր  
փետոյի Պ. Թ. Մ. միջացով.

իցէ մի արձանագրութիւն կամ տեղեկութիւն գտ-  
նել այս անհետացած Ս. եկեղեցւոյ մասին. և յօդ  
զարմանալի է թվում մեզ որ հանգուցեալ բազմա-  
ծն և արդիւնաւոր Յովհաննէս եպիսկոպոսն Շահ-  
խաթունեանց իւր, Ստոր. Կաթ. Եջմի. և հենգ գաւա.  
Արար.« երկհասոր գրքին մէջ ու մի տեղեկութիւն  
չկայ այս մասին: Այնու ամենայնիւ, մենք շատ  
հարցափորձութիւններից յետոյ՝ բարդ ունեցանք  
տեսնել մէր քաղաքացի Պ. Նղիայ Նղիայեանցի մօտ,  
մէկ գրչագիր ճաշոց՝ բաւականին մեծ գրութեամբ,  
որի յիշատակարանում գտանքհետեւեալը.«—Ընդհո-  
վանեաւ սուրբ Կաթուղիկէին, և սուրբ երկու ե-  
րեսին, սուրբ Յակոբին և սուրբ Սարգիս զօրաւա-  
րին ի թուաբերութեանս հայկազեան տօմարի. Թձ.  
«և ԼԳ. թուի. ի թագաւորութեան պարակից Շահ-  
ասուլիշմանին. ի բոնակալութեան տանս արարա-  
տեան պալմանին: Ի հայրապետութեան սուրբ Եջ-  
միածնայ տեառն Նղիազարու սրբազն հեղինակ և  
«յաջորդութեան սուրբ ուխախս մերոյ ոհանավանից  
սուրբ կարապետին:»

Ահա այս Յիշատակարանից երեւում է որ, այդ  
եկեղեցւոյ անունն էր՝ «Երկու երեսանի Սուրբ Յա-  
կոբ» Սրբու երեսանի տառած է եղել նորա համար՝  
նախ, որ եկեղեցին շինուածէ եղել ինչպէս և երե-

ում էր հնութիւն՝ երկու երեսից: Բ. Հնու մն որով հնուել ջորագիւղի , Անապատու անուանեալ Կաթուզիկասական իջևանի, որ այժմեան առաջնորդարանն է հիւսիսակողմում կար և , Սուրբ Յակոբայ՝ անուամբ եկեղեցի, երթեւեկ հայագիւ վաճառականաց և ձանապարհորդաց համար, և որպէս զի զանազանուելին միմիանցից՝ սա կրում էր իւր վերայ նրէնու երեսունի . Յակուբ անուամբ:

Մեր հետաքննութեամբը երեւում է որ, այն սարսափելի մեծ երկրաշարժը որ պատահեցաւ 1679 թուականին՝ Երևան քաղաքի բոլոր շինութիւնները կատարելապէս կործանեց, աշա այս Ս. Յակոբ երկու երեսանի եկեղեցին ևս ի թիւս միւսների՝ բոլորովն քայլույսուեցաւ. և որպէս երեւում է այդ քայլույս. ուած դրութեան մեջ քանի մի աարի շարունակարքար ժամաացութիւն է եղել. իսկ յետոյ նոյն իսկ եկեղեցական պարուղի վերի կողմումը շինել են մեկ նոր եկեղեցի , Ս. Պետրոս և Պողոս անուամբ, որ կայ այժմ, ի հարկէ և հաւանական է որ նորա քարերը գործադրած են եղել այժմեան եղած , Ս. Պետրոս և Պողոս եկեղեցւոյ շինութեան վերայ:

Յիշեալ Յիշատակարանից պարզ յայտնվում է այն՝ որ վերոյիշեալ սարսափելի երկրաշարժէց (1673 թ. Փրկչը) հինգ տասի անցնելուց յետոյ, այնէ նույն

1684 թ. դրուածէ Յշատակարանը, որի մէջ, միմիայն «Ընդ հովանեաւ սուրբ Կաթուզիկէնին, և «սուրբ երկու երեսին, սուրբ Յակոբին և սուրբ Սարգիս զօրաւարին և լինաշանակում է» որ այն ժամանակը գեռ չկար Ս. Պետրոս և Պողոս եկեղեցին, որպէս և չկար Կոնդի , Ս. Յովհաննէս Մկրտչու եկեղեցին\*). բայց Ս. Կաթուզիկէ եկեղեցին՝ որպէս և հին Ս. Սարգիս եկեղեցին\*\*\*) երկրաշարժից յետոյ որպէս երեւում է շուտով շինել են: Խոկ հանգուց. Նահիսաթունեանցի , Ստորագը. «մէջ բերած Կաթուզիկէի շինութեան աղազաւ թիւն Ուձնի-1693. երեսի որեւէցէ մի վերանորոգութեան հաւանական թիւ է, և ոչ եկեղեցւոյ շինութեան, որովհետեւ ինչպէս երեւաց այդ թուից շատ առաջ արդէն յիշատակած էր Ս. Կաթուզիկէն. մօտաւորապէս կարելի է ընդունել Ս. Կաթ. եկեղեցւոյ շինութեան թիւը 1680-1683 թ.

Ահա ոյսպէս անհետացաւ և այս նախնեսոց հընութեան նուիրական հետքը, որ մեզ խիստ մեծ ցաւ և տիարութիւն պատճառեց:

(\*) Կոնդի , Ս. Յովհ. Մկրտ. եկեղեցին շինուածէ Ուձնի-1708 թ.

(\*\*) Հին Ս. Սարգիս զօրավարը եկեղեցին շինել էր նույնապէտ կառթուղիսան. բայց սրբավետի վլւջն ժամ համեմերտում քայլացուելու վայր էր՝ ուսումնի 1835 թ. քանդելով նորին շինեցին, որ այժմ մեծ Ս. Սարգիս եկեղեցւ է, նոյն եսկ տեղաւու:

ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻ ՄԵԿ ՇԽ ԶՈՒՐԸ

Շատերին յայտնի չէ որ Երուսաղէմում կայ մէկ անապաշտութիւն. որով Յորդանան գետի ջուրը վրանասակար է լինում, նորածին երեխուն մլրտելու համար միայն այն ժամանակը՝ Երբ որ մլրտութիւնը, նոյն իսկ Պաղեստինում մէջ չէ կատարվում: 1882 թ. եղեւ հետեւեալ անցքը:—

ՄԵԿ երիտասարդ վարակուած էր սարսափելի տկարութիւնների մէջ, երբ բոլորովին առողջացաւնա այդ անսպասելի հիւանդութիւններից՝ ուխտեց որ անշոշաց գնաց Երուսաղէմ Քրիստոսի Ս. Գերեզմանը համբուրելու: Փոքր միջոցից յետոյ պատրաստուեց և այնպէս գնաց Երուսաղէմ: Նա բնակուեցաւ սուրբ երկրումը մի քան ամիս: Այս իսկ ժամանակում իւր քոյլը մարգու գնաց, և անյնելով մի միջոց՝ զգաց որ ինքը յդի է, ուստի դիմեց նա իւր եղբօրը հետեւեալ ինդիլքով՝ ուղարկել նորան մէկ շիշ Յորդանան գետի ջրից, որ երբոր երեխն ծնր՝ մլրտի նորամուգ...: Եղբայրը պատասխանեց հետեւեալ նամակով:— «Ո՛չ սիրելի քոյլը իմ, ես չեմ կարող կատարելքո յանձնարարութիւնը. ես չեմ ուղարկիլ

«քեզ Յորդանանու ջրից: Դու երեխ չդիտես, այս տեղի շատ հնուց աւանդուած կարծիքը, որով այս ջուրը ամբաղդութիւն է բերում երեխաներին՝ ու քոնք այստեղ չեն մլրտվում: Որպէս զի հեռու չը գնանք՝ վերցնենք ամենամօտ օրինակները: Մարիամ Անտուանէտար և իւր աղջիկը որ Անգուլէմայի վըքսուհին էր. մլրտուած էրն աւագանի մէջ Յորդանանի ջռով:— բայց երկուսն էլ վերջացրին իրենց կեանքը կառավինարանի վրէն: Սօտ ժամանակին քրում երեք անձինք կամեցան փորձելով հասկանալ իւրենց վրայ սնապաշտութեան ճշմարտութիւնը:— Կայսերուհի Նարլուտան, Նախկին Նէալոլիտայի ժառանդական թագուհին, մերջապէս արքայակիրդի Առուի, որ Նապալիօն Բննապարանի երրորդ որդին էր: Ահա սրանց անբաղդութիւնը մշտապէս շարունակվումէր:»

Քոյլը ուշադրութիւն չդարձրեց այս նամակին, ոյլ պնդելով ստիպում էր եղբօրը, որ նա ուղարկէ անշոշաց Յորդանանի ջրից:

Եղբայրը տեսնելով քրօջ կրկնակի խնդիրը, ակամայից ստիպուեցաւ վերջապէս ուղարկել մէկ շիշ Յորդանանու ջուր: Քոյլը ստացաւ ջուրը. շուտով ծնեց աղջիկ, բայց հենց մլրտութեան միւսը օրը մեռաւ: Երիտասարդ եղբայրը ստանալով այս մասին

տեղեկութիւն՝ զրեց քրոջը: «Կարծիքը ճշմարտացաւ: Այստեղի Արարները զուր չեն անուանում Յորդանանու ջրին՝, Յաւիանական կենաց ջուր»: Քո աղջեկը մտաւ, անցաւ նորս մէջ, չփորձելով երկրոյն չարչարանքները:

167

ԺԱՄԱՅՈՒԹԻ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԻ ՀԵՏ:

Առհասարակ լաւ ժամացոյցը երրէք չէ կորող ողիղ լինել արեի հետ, նորա համար որ, ժամացոյցը արեի հետ՝ ամբողջ տարու այ մէջ, միմիայն չորս անգամ է բոլորովին ուղիղ լինում: Ըստհամբարապէս մեր ժամացոյցները համարեա հաւասարվում են արեի ժամացուցի հետ, միմիայն Ապրիլի 15-ին Յունիսի 15-ին, Օգոստոսի 31-ին, և Դեկտեմբերի 25-ին:

Փեղվարի 11-ին արեի ժամացոյցը յետ է մեռմ 14 րոպէից աւելի: Մայիսի 15-ին յառաջ է ընկնում մինչև 5 րոպէ: Յուլիսի 25-ին յետ է մըրնում մինչև 6 րոպէ: Եւ նոյեմբերի 3-ին յառաջ է ընկնում մինչև 18 րոպէ:

168 ԾՆՍԴՆԵՐԻ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՆՑ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ս.ՄՄՆԵՐԻ ԵՒ Ժ.ՄՄԵՐԻ ՄԷՋ:

Աշխարհիս մէջ, ընդհանրապէս երեխաների անհաղաք ծննդները լինում են Փետրվարից մինչև Մարտը: Իսկ ամենասատկաւ ծննդները լինում են՝ Յունիսին և Յուլիսին: Ծննդների երկրորդ քանակութիւնը պատահումէ և աշնան սկզբին. օրինակի համար, Փարիզի մէջ Մարտ ամսին, ծննդների թիւն հասնում է մինչև 5100, իսկ Յուլիսին միայն մինչև 3900:

Օրուայ ժամերը նոյնպէս ազգեցութիւն ունին ծննդների վերայ: Ակսեալ երեկոյեան վեց ժամից մինչև առաւօտեան վեց ժամն՝ ծննում են  $\frac{1}{5}$  աւելի երեխէք, քան թէ առաւօտեան 6 ժամից մինչև երեկ. 6 ժ: Ամենասատկաւ ծննդները լինում են առաւօտեան 10 ժամն. իսկ ամենամեծ քանակութեամբ ծննդները լինում են կէս գիշերին:

169 ՕՐՈՒԳԻՇԵՐՈՒԱՅ ՄԻԶՈՅՆԵՐԻ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԱՀՈՒԱՆ ՎԵՐԱՅ:

Առհասարակ երեկոյեան 6 ժամին՝ և կէս գիշերի մէջ, պատահում են ամենասատկաւ մեռնողներ. իսկ մեծ քանակութեամբ մահը լինում է առաւօտեան:

170 ԵՐՁԱՆԿԱՅԻԾԱՏԱԿ ՆԵՐՄԱԿԱՄ Ե ԿԱԹՈՒԳՎԱԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԳՈՐԾՔԵՐԻՑ՝

ՄԻ ՀԱՅ ՔԱՀԱՆԱԹԻ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ;

Ա. Վեհ Ներսիսի օրերում,  
Մի քահանայ ընտրուեց.  
Հայաստանի կողմերում՝  
Օրհնութիւնը կատարուեց:

Բ. Այս նորընծայ տէրտէրը՝  
Զուարձախօս էր լեզուաւ,  
Աշխատում էր իւր սէրը,  
Որ ծաւալուի յոյժ մէծաւ:

Գ. Գրել կարդալ գիտութիւն,  
Ունէր փոքր ինչ մի միջակ,  
Եւ կրօնի հմտութիւն՝  
Կար նորանում նոյն գունակ:

Դ. Գիտէր նա և այլ լեզու,  
Խօսել կարդալ շատ փոքր.  
Նա խօսում էր խիստ ազգու՝  
Եւ ձարսպիկ էր ոչ փոքր:

Ե. Հայեացք ունէր գեղեցիկ,  
Խազոքոյլ էր ընթացքը.

Բայց նա ունէր մի գաղտնիք,  
Նատ անպիտան վատթարը:

Զ. Թէ ակամոյ թէ կամաւ,  
Պէտք է բացել գաղտնիքը,  
Զի գեռ փոքրից ցանկացաւ՝  
Ունենալ այդ վատ ձիրքը:

Է. Բայց մի կերպով նա պահեց՝  
Մինչ քահանայ օծուիլը,  
Երբ ամբոխին ծանօթուեց՝  
Նա տապալեց գաղտնիքը:

Ը. Գինարբու էր խիստ սաստիկ,  
Զէր ատում և օդին,  
Նա խմում էր խիստ մեղմիկ՝  
Ոյժ էր տալիս իւր լեզուին:

Թ. Փոքր առ փոքր վերջապէս՝  
Այս գաղտնիքը իմացուեց,  
Բայց զարմանք էր թէ ի՞նչպէս՝  
Նա այսքան տարի չիմացուեց:

Ժ. Բաց համարձակ սկսեց՝  
Խմբչքներին մօտենալ,  
Լաւ խմելում նա փայլեց՝  
Արդ սկսեց վատանալ:

— 376 —

ԺԱ. Կա թուլացաւ պաշտօնում,  
Եւ կորցրեց եռանդը,  
Երբէք չէր էլ նա հոգում՝  
Որ փոխվում էր իւր դէֆը:

ԺԲ. Կա թուլացաւ, վասացաւ,  
Մե՛ծ զեղծումներ նա զործեց,  
Կարգ ու կանոն մոռացաւ՝  
Ազնվութիւն չը յիշեց:

ԺԳ. Ժողովուեցին ամբոխը,  
Որ խրառեն տէրտէրին...  
Բայց նա ասաց, իմ ծուխը՝  
Նս չեմ թողնիլ ոչ մէկին:

ԺԴ. Ո՛չ մի խրառ, համողմունք,  
Զէր ըմբռնում տէրտէրին,  
Չունէր հաստատ նա խոսամունք՝  
Որ չհասնէր այդ օրին:

ԺԵ. Ժողովուրդը շու արուեց,  
Զէր իմանում ինչ անել,  
Վերջ ի վերջոյ նա վճռեց՝  
Վեհ ներսիսի մօտ դիմել:

ԺԶ. Երեք հողիք խոհականք,  
Եկին Եջման սուրբ տեղը,

Խիստ եռանդով մեծ յարդանք՝  
Նուիրեցին առ վեհը:

ԺԷ. « Բարի լինի Զեր գալուստ,  
Ասաց պետե այն ներսէս,  
« Այլքան երկար ՚ի հեռուստ  
« Ե՞ր գաք խմբով փութապէս:

ԺԲ. « Աստուածարեալ հայրապետ,  
« Դուք գահակալ Լուսատուին,  
« Տուր համբռուել հովուապետ  
« Զեր քաղցրիկ Աջ գլխովին:

ԺԹ. « Այն քահանան նորընծայ,  
Ասաց աւագն նոյանից  
« Գինամօլեալ արբենայ՝  
« Զէ հեռանում գլնէտնից,

Ի. « Ժամ, պատարագ և պաշտում՝  
« Բարձի թողեալ ընժանայ,  
« Զուր են նորա ողջ խոստում՝  
« Զի մշտապէս մուանայ:

ԻԱ. « Ո՛՛քան խնդիրք աղաւանք,  
« Տեղերուելով հայցեցինք,  
« Բայց մեր բոլոր հոգս ու ջանք՝  
« Ի զուր տեղը անցուցինք:

- ի՞ն. « Արտաճմլեալ մնալով,  
« Ոչ մի հնար չպտանք,  
« Արդ աղերսմամբ դիմելով՝  
« Վեհիդ մօտ է մեր փրկանք:
- ի՞դ. « Աղերսու մենք, Վեհափառ,  
Զայնտկցեցին միասին,  
« Պահանջեցէք խստաբար,  
« Որ նա թողնէ այդ հոգին:
- ի՞ր. « Թեէ ոչ՝ այժմ չենք կարող,  
« Ոչ մի կերպով դիմանալ  
« Զի նա խմիչք է սիրող՝  
« Մեզ չէ կարող մօտենալ:
- ի՞ն. « Շատ տլսուր է Ձեր վեճակ,  
Ասաց վեհն այն ներսէս,  
« Եւ ինչ վաստիար խայտառակ՝  
« Ընթացք ունէ դա այդպէս:
- ի՞ջ. « Ափսոս այն սուրբ կոչումը,  
« Որ մենք նորան տուեցինք,  
« Եւ երեցի օձումը՝  
« Մենք նորանում փնդուեցինք:
- ի՞ն. « Առհասարակ մեր Հայքը,  
« Միշտ իտքեօս են բան տեսնեմ,

- « Այդ առիթով մեր միոքը՝  
« Պինդ որոշման չէ հանում:
- ի՞ն. « Ինչի՞ համար անդդյուշ  
« Դուք ընտրեցիք այդ մարդին,  
« Որի ընթացք եղեւ փուշ  
« Եւ շփոթեց Ձեր հոգին:
- ի՞թ. « Քանի՞ անգամ պատուերներ,  
« Մեր Հայերին տուեցի,  
« Եւ ընտրութեան կանոներ՝  
« Ընդհանրութեան ցրուեցի:
- լ. « Բայց և այնպէս գուք որդիք,  
« Զէք կատարում իսկապէս,  
« Որպէս զի մեր սուրբ տեղիք՝  
« Փայլէր կարգով վեհապէս:  
« Աւանդ
- լ. Ա. « Մեր ինկելի սուրբ տաճարք,  
« Ուք են դնում անալժանք,  
« Ժողովրդոց այս արարք՝  
« Ոչ խափանեն սուրբ մաղթանք:
- լ. Բ. « Եհու, վերջապէս սիրելիք,  
« Հանդիսա գացէք անվրդով,  
« Ինչ որ պէտք են անելիք՝

- « Դուք կ'անենէք իսկատ վութով:
- լ.թ. « Ասուածածային օրհնութիւն,  
« Ծաւալեսցէ Ձեզ վրայ,  
« Եւ միշտ բարի ուղղութիւն  
« Տիրապետ է մշտակայ:
- լ.թ. Օրհնեց, թէ չէ վեհ աէրը՝  
Նոքա գլուխ տուեցին,  
Որդիական մեծ սէրը,  
Օվնածութեամբ յայտնեցին,
- լ.թ. Համբուրեցին Խջման տեղ՝  
Եւ սուրբ մասունք գլխովին,  
Եւ բոլոր միւսք սրբատեղ՝  
Մէջ յարգանքով լիովին:
- լ.թ. Ուղի անկան գնացին,  
Հասան իրենց հայրենիք  
Բոլորեցունց պատմեցին՝  
Իւրեանց բոլոր անելիք:
- լ.թ. Քահանայի արարքը,  
Վեհափառին տիրեցրեց  
Նորա հոռի վատ կամքը՝  
Վեհի գութը չը շարժեց:
- լ.թ. Ուստի այնպէս և վութով

- Վեհ հըրամանը հասաւ,—  
Պատիժ կրել վեց ամսով՝  
Նա փիլոնից զըկուեցաւ:
- լ.թ. Հեռու մնալ և դասից՝  
Ժողովրդի մէջ կանգնել,  
Խիստ հրաման էր վեհեց՝  
Եւ ժամասաց չը լինել:
- լ.թ. Մեր քահանան երբ լսեց՝  
Խիստ տաքացաւ, բարկացաւ,  
Ոչ մի հրաման չպահեց՝  
Այլ տաճարից հեռացաւ:
- լ.թ. Կա հեռացաւ, բայց երբէք  
Խոհեմութիւն չը յիշեց,  
Գոնէ հայցեր՝ «ինձ ներէք»՝  
« Բաւ է վեհը ինձ պատժեց:
- լ.թ. Տգիտաբար նա մոքով՝  
Շատ չափափեց ու ձեւեց,  
Ոչ մի ազատ պարզ խելքով՝  
Իւր օգուտը մտածեց:
- լ.թ. Վլատաբարոյ ընթացքը,  
Զըգուացրեց ամենքին,  
Նորա կեղաստ արարքը,  
Դուր չէր գալիս ոչ մէկին:

- ԽԳ.  
Յանկարծ յայտնեց նա նոր միտք,—  
« Կրօնավո՞լ եմ դառնում,  
« Զի ձեր բոլոր լըջամիտք՝  
« Խնձ այս օրեր է գարձնում:
- ԽԵ.  
« Եթէ կամիք առեցէք  
« Իմ փիլօնը յետ առած՝  
« Վեհափառին յայտնեցէք,  
« Որ սաստիկ եմ նեղացած:
- ԽԶ.  
Ժողովովից շատերը,  
Համոզեցին, խնդրեցին,  
Բայց բոլոր այն խօսքերը,  
Ոչ մի կերպով չօգնեցին:
- ԽԵ.  
Այլ նա շուտով պատրաստեց,  
Կրօն փոխելու թուղթը,  
Խ՛ստ տաքացած նա դիմեց՝  
Այլադաւան նոր ուխտը:
- ԽԸ.  
Խիստ մեծ սիրով ընկալան,  
Սյս ջերմեռանդ հերոսին,  
Նոքա շուտով խոստացան՝  
Հասցնել իրեն փափաղին:
- ԽԹ.  
Այլադաւան այն ուխտից՝  
Մէկ թուղթ հասու առ ներսէս,

- Քմածիծաղ նա սրտից՝  
Նայեց, կարդաց, էր այսպէս.—
- Ե.  
« Զեր մէկ այս ինչ քահանայն,  
« Խնդրամատոյց մեզ եղաւ,  
« Նորս ազատ միտք է այն՝  
« Եկեղեցին Զեր թողաւ:
- ԵԱ.  
« Զիք ինչ արդեօք մի արդելք,  
« Որ և է բան Զեր Վեհից՝  
« Զի այն խնդրին մենք տանք ելք,  
« Որ ընդունուեց մեր կողմից:
- ԵԲ.  
Կարդաց թէ չէ „Մեծ Սարդը“,  
Միջակ դարձրեց իւր դէմքը,  
Մի կողմ դրեց այն թուղթը՝  
Դրեց իսկոյն այս խօսքը:—
- ԵԳ.  
Ես այդպիսէք շատ ունեմ,  
Տարէք, որքան Դուք կուզէք,  
Զի ես սրտով ուրախ եմ՝  
Այդպիսներից մեղ փրկէք:

## ՄԵՆԱՍՏԱՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

171 ՆՈՒԽԱՏԵՂ ՄՐԳՈՅՆ ԽՈՐՎԻՐԱՊԱՅՑ  
ՎԱՆԻՑ.

Կնցեալ տարի մենք հրատարակեցինք,,Անապատ  
որբոյն Սեանայ Վանից<sup>(\*)</sup> վերնազրով ընդարձակ յօ-  
դուածը. \*) որը՝ ամեն տեղ խիստ մեծ ընդունե-  
լութիւն գտառ. Ահա և մենք շարունակաբար, այս  
տարի հրատարակում ենք՝,,Սրբոյն Խոր-Վիրապայ  
վանից<sup>(\*)</sup> ընդհանուր տեղեկութիւնքը:—

Սուրբ Խորվիրապի վանքը՝ գտնվում է, մեր նախ-  
նեաց Արտաշատ քաղաքի բլրակի վերայ: Սրբոյն  
Գրիգորի Վէճրապի վերայի վանքը, նոյն և միւս Ս.  
Աստուածածնոյ Եկեղեցին՝ բացի նախապէս շինելուց՝  
և զանազան միջոցներում վերանորոգելուց զկնի՝  
շինուած են և ներսէս Ենող հայրապետից, իսկ  
բաւականաչափ ժամանակներից յետոյ՝ նորից շինուա-  
ծէ, հանդերձ պարսպով և սենեակներով աշխատու-  
թեամբ Դաւիթ վարդապետի Տփիսիսեցւոյ: \*\*\*) Պար-

(\*) ՏԵ՛ս „Ծաղ. Ընտ.“ է. ա. 1882 թ. 122 յաւ:

(\*\*) ՏԵ՛ս այս մասին հետաքրքրական տեղեկութիւն Հայք Եահետ-  
թունեանցի, Սոսորագրութիւն կաթ. Էջմիածնի և կինդ գաւառա-  
ցըն Արարատաց. Հ. Բ. գլուխ 571. Երևան 277-282:

սից տիրապետութեան ժամանակ, այդ վանքը խիստ  
աննշան զրութեան մեջ է եղել. որովհետեւ Ճանա-  
պարհի երկիւղները, թոյլ չեն տուել ուխտաւորնե-  
րին յաճախել այդ սուրբ նուիրական տեղերը. իսկ  
Ռուսաց Պետութեան՝ Խրեանը առնելէն զկնի՝ Ս.  
Խորվիրապը, սկսում է հետ գչետէ մեծ նշանակու-  
թիւն ստանալ, և ուխտաւորները սկսում են շա-  
րունակարար յաճախել: Մեզ յոյժ ցանկալի էր իմաս-  
նալ, ի բնէ անտի զանազան միջոցներում եղած վա-  
նահարց անուտնքը, և աւհասարակ նոցա կարդա-  
գրութիւնքը ելն, բայց որովհետեւ վանքում չկայ ոչ  
մի կանոնաւոր մատեան՝ որ ի բնէ անտի շարունա-  
կարար ժողովուած գրուած լինէր՝ վանահարց ան-  
ուտնքը և տոշմանուտնքը, նոցա գործունէութիւն-  
քը, երեելի անցքերը, միաբանաց թիւը՝ զանազան  
ժամանակներում. նոցա նախնաւանդ և նորաւանդ  
սովորութիւնները, պաշտամունքը ևն, ևն, վանու-  
րոյ՝ և մենք, հազեւ հաղ կարողացանք զանազան աղ-  
բիւներից գտնելով դնել մի քանի վանսհարց ան-  
ուտնքը:

ՎԱՆԱՀԱՐՔ Ս. ԽՈՐՎԻՐԱՊԱՅՑ ՎԱՆԻՑ

ա. Անտօն եպիսկոպոս 1441 թ.

բ. Անտօն եպիսկոպոս 1603 թ.

- գ. Դասիթ վարդապետ Տփխիսեցի. վերջին վերանուրոգող մենասուանիս և եկեղեցեացն, նստեալ 1661 թ. և վախճանեալ 1695 թ:
- դ. Ստեփան վարդապետ Նրեանցի. 1827 թ. սա շինէլ է Իւվայ անուանեալ գիւղումն, որ 5 մզոն հեռու է վանքից՝ չմերանոյ, ուր բնակուածէ եղել ինքը, և պահպանել է տուել վանքի անասնեղինները. սա բաւականաշափ աշխատութիւն և հաւատարիմ ծառայութիւն է ցոյց տուել վանքին, շինելով մի ներքնատուն, և մէկ հոր, որին անո անում էին ժամանառար. իսկ Պարակերէն՝ շրիայտը որը մօտ 10 տարի է որ այլ ևս չկայ:
- ե. Գալուստ Վարդապետ Դարունեցի, որ ի Կողովիտ գաւառէ. ըստ այլոց՝ Բայազուկցի. 1840 թ. որը այնքան անհոգ է լինում՝ որ ոչ մի քարքարի վերայ չէ դնում. այլ բոլորովին անխնամ է թողնում վանքը:
- զ. Յովսեփ վարդապետ Տփխիսեցի. այր գիտնական և գործունեայ ևս և հարուստ, սա շինէլ է արեմբտեան կողմում երկու հիմնաւոր սենեակ և մի նախասենեակ. չնայելով այդ վարդապետի տկար դրութեան՝ վանքը միշտ խնամքով է պահպանել:
- հ. Զաքարիա Վարդապետ Նովրուզ յի. որ նախ քահա-

- նայ է եղել գիւղումն. այր յոյժ անգործ և անհոգ: Յակով Վարդապետ Քեանդարէանց, սա շինէլ է արևելեան կողմում պարսպի մեծ դրան վերայ՝ երկու փառաւոր սենեակ. իւր երկու պատշգամբովն. բայց ափսոս որ շուտով տեղափոխել են. այն է վանահայրութիւն է արել 1853 թ. մինչև 1856 թ: թ. Պիտիրա Վարդապետ. որը շինում է հարաւային կողմի պարսպի պատերը և երկու բուրջը:
- ժ. Գէորգ Վարդապետ Աւագեան Նրեանցի, ունէ շինած 2 սենեակ, կից Յակոր վարդապետի շինածներին. և 1 ցորենի ամբար. սա մեծ աշխատութեամբ կարողանում է մասնաւոր հողը սեպհականացնել վանքին, բաւական վէճ ունենալով Նրեանայ նիւքիւր խանի հետ: Նրանի թէ մեր վանահայրելրը սորա չսափ աշխատանք ունենայն. որով ոչ փոքր օգուտ հասցրած կլինէին այդ Հայրենեաց նուիրական սրբատեղին: Այս վանահայրը վախճանեցաւ Նրեանում, Ս. Շողակամթի վանահայրութեան պաշտօնի մէջ:
- ժա. Ստեփաննոս Վարդապետ Մ. Խսկեանդարեան. այր բազմաշխատ և հոգացող. սա շինեց Յ բաւականին ընդարձակ սենեակներ, մէկ մարագ, դարմանանց, և փոխադրեց գոմանոցը վանքի պարսպէց դուրս. այդ գոմանոցը 2 արշին բարձրացնելով

այլապէս է հռչակվում, և այս առթիւ վանաս հայրութիւնից արձակում են:

Ժբ. Յակէ Վարդապէտ Տէր Աւետիքէտն Վաղարշապատցի, որ ոչ մէկ օգուտ չէ տուել վանքին, գ ամսից յետոյ վախճանում է:

Ժբ. Պատրիարք Մաշեակէտն Ալաշկերտցի, որ վարէ այժմ իւր վանահայրութիւնը. սա՝ Ստեփաննաս վարդապէտի սկսած գոմանոցը և նորա պարիսպը կատարելագործում է. և հաւատարմութեամբ ծառայում է. այժմ շնորհ է տալիս 1880 թ. քանդուած ներքնատունը և վերնատունը, և եկեղեցւոյ կից լեռ քարերը, կարել է տալիս պարիսպը ընդարձակելու համար, որ մի գեղեցիկ ձեռնարկութիւն է: Պէտքէ ի նկատի ունենալ և այն՝ որ զանազան վանահայրերի ժամանակներում միշտ պատահած են վերանորոգութիւններ:

Ա. Խորվիրապայ վանքում՝ կայ 2 վանք, որոց մէն է Ա. Աստուածածայ եկեղեցի. իսկ միւսն՝ Սուրբ Խորվիրապի տաճար: Առհասարակ ժամանացութիւնն լինում է ըստ մեծի մասին Ա. Աստուածածայ եկեղեցում, միմիայն ձմեռը ցրտի պատճառուն՝ ժամանացութիւնը կատարվում է Ա. Խորվիրապայ վանքում. որը բաւականին փոքրն է: Եւ այս իսկ առթիւ՝ այս Ա. Խորվիրապայ վանքում հազիւթէ պա-

տահում է պատարագ մատուցանել. բայց եթէ փափաղողներ լինում են՝ այն ժամանակ կատարում են նոցա բաղձանքը:

Ա. Աստուածածնայ վանքի Արևելս—Հիւսիսոյին կողմումն է,, 0թեաց սուրբ Խաչը, “որի արդինքը հասնում է տարեկան՝ սկսեալ մինչեւ 10—15 միթ: Մաս 10—11 տարի կայ, որ մէկ 53 ամեայ աչքերից տկար կոյս, Զմուռթ անուամբ՝ եկած է և մնուամէ վանքում օգնելով տնտեսներին: Այս կոյսը առանձնապէս ծառայում է,, 0թեաց Ա, Խաչի“ մատուռում, որի արդինքը վանահայրը նուիրած է նորան:

ԺԱՄԱՍՈՅԻԹԻՒՆ է ԸՍ ՆԱԽԱԱԽԱՆԴ ՍՈՎԱՐՈՒԹԵԱՆ. Այնէ օրը, երկու անդամ միայն պէտքէ ժամասացութիւն ասել, առաւոտ և երեկոյ, որը կատարվում է մշտապէտ. բայց հազուագիւտ պատահումէ և բացառութիւն: Պատարագ լինում է միմիայն մեծ տօներին, իսկ կիւրակէ օրերում՝ երբ միայն ուխտաւորք են լինում: Ուխտաւորաց ժամանակը երաբեմն լինում է պատարագ և հասարակ օրերում:

Ա. Հասարակպատարագ մատուցանել տրւողն, պէտքէ պատարագչին 2 միթ ժամոց տայ. բայց եթէ տուած ժամոցները երկու մասնեթից պակաս է լինում, յայնժամ լրացնում են պակասը վանքից: Ժամարարի ստացած ժամոցը իւր սեպհականութիւննե.

իսկ Փառք ի բարձման, Մէջ աշխարհ գոլու, և Առաքելոցի բոլոր դանձմանակազմամները զուտ մնում են յօդուտ վանքին:

ԿՈ.ՌՈ.Խ.ՐՈՒԹԻՒՆՔ ՄԻԱԲԱՆԻՑ:

Որովհետեւ վանահայրերը շատ անգամ միայնակ են եղել՝ այս պատճառաւ կանոնաւոր բան չկայ. Հետեւապէս և ուտելեաց կանոնն չկոյ. Բոյց այնու ամենայնիւ այս ներկայ վանահօր օրօք՝ օրու զիշերուայ մէջ, երկու անգամ կանոնաւոր սեղան են նստում իմիասին, այնէ՝ առա օտեան 10 ժամին, և երեկոյեան Դ ժամին: Կերակուրներն լինում են միմիայն մէկ տեսակ, միայն ամեն օր կերակուրների հետ տալիս են՝ պանիր կամ ժամիկ. իսկ պահոց օրերը՝ պօլս և թըթու: Դինին պատահական է. բայց օղի մշտական առաւօտ և երեկոյ տալիս են մէկ մէկ օղիի բաժակով: Միաբաններից ցանկացողք օրու ոյ մէջ, ինչ ժամանակ որ լինէ՝ կարող են սատնալտընտեսից հաց, և յիշեալ ուտելիքներից ինչ որ պատրաստ ունենան: Կերակուրները պատրաստում են՝ ուտիք օրերին, կաթնով, քաշովի, եալնի, տօլմայ, սրպաս, հաւկիթ, զաւուրմայ, կարագ և բանջարեղին. օրումէջ փոփոխելով, կամ լաւ ևս ասել՝ որ օրը ինչ որ պատրաստ է լինում: Պահոց սեղանը նոյն է: Կերակուրներն են՝ լորախաշու, ոսպախաշու, սիւ-

սեոի կերակուր, մախող, և չորացրած կանանչեղենից կերակրներ:

ՄԻԱԲԱՆՔ Ս. ԽՈՐՎԻՐԱՊԱՅ ՎԱՆԻՑ:

ա. Վ անահայր Պօղոս Վարդապետ Մալխասիան Աւլուցկերացի:

բ. Գրիգոր Ճայրագոյն Վարդապետ, Տէր Սուեփաննոսեանց Երեանցի:

4 Տիրացուք և 2 Տնտես: Ըստ ամենն ու թն անձինք:

Բացի այս բոլորը, վանքը, ամենայն տարի ունենում է մէկ ծառայ, մէկ նախարարդ, և մէկ հօրդարած:

Ամենայն տարի համարեա լինում են հոդեորականներից ապաշխարողներ, որոնց ուղարկումէ Վեհափառ Կաթողիկոսը պատժելով: Այս 1882 թ. ապաշխարում են Վեհ. հրամանաւ՝ 2 վարդապետ Արիստակէս և Բարդուղմէսո անուամբք, և 1 քահանայ Աշտարակեցի Գրիգոր անուամբ:

ԿԱ.ՌՈՒԱԾՔ, ԿԱ.ԲՈՂ.ՌՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՅԼՆ:

Երեանում՝ վանքը ունէ 1 այգի, որ նորք քաղաքամասումն է, կ. յ Ս. Աստուածածնայ ուխտատեղւոյն, տուած է կատաղաւ տարեկան 153 բուրըին: Վանքի արդիւնքը աննշան է: Վանահայրը և իւր միաբանները շատ պարզ են ապրում, կարելի է

ասել որ նահապետական տպրուստ ունին:

Վ անքը ունէ՝ մօտ 150 այծ և ոչխար, 20 հատ եղ, կով և արջառ, 2 ձի, և 2 սայլ: Վանահօր և միաբանաց հագուստները վանքիցն է:

Վ անքը ջուր չունի, այլ 800 արշին հեռաւուրութեամբ՝ նրասիսից ջուր են բերում թէ խմելու և թէ բանացնելու համար: Նրասիսը (Արագլ) բարձրանալուս՝ ջուրը գալիս է վանքի առաջ, ուր կան երկու տեղ, որտեղ որ ջրիցը մեծ քանակութեամբ սուզիչում է գետնի տակ:

ՎԱՆՔԻ ՈՒԽՏԻ, ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՊԱՌԸ:

Սոր Կիւրակէի—Կրկնազատկի օրը վանքի ուխտն է, որ մերձակոյ շատ տեղերից գալիս են բաւականաչի ուխտաւորներ, իսկ ուրիշ ժամանակներում շատ սակաւ են լինում թէ ուխտաւորներ, և թէ ճանապարհորդներ:

Թուշքերը նոյնպէս սովորութիւն ունեն, զի՞ն ժամանակներից սկսեալ ամեն տարի ուխտայրութեան դալ: Կրքա գալիս են մեծ մասամբ կանանց խմբերով: և որոնք սրաեռանդն աղօթք են անում՝ նոյն իսկ երկու ս, տաճաշների մէջ, և համբուրում են մինչև անդամ բոլոր պատկերները և Սուրբ Խորին բարձրապի մուտքը: կան այնպիսիք ևս՝ որոնք ողջակի

իջնում են Ս. Վիրտապի մէջ, և համբուրում են այն սուրբ որձաքարը՝ որի վերայ Ս. Առաւորիչը միշտ ծնրագրութիւն է արել, որ մինչև սննդամ մաշուած տեղերը և նշանները երկում են: Թուլքերը նոյնպէս մատաղ են անում, բերելով ոչխար, այծ, կամ ալտնի հաց: Բայց զարմանալի է, որ թուլքերը սովորութիւն չունեն զանձանակ ձգել այլ միմիպին մոմեր են վառում: մոմագին վճարելով մերթ ուլունք, մելթ մանածի կամ: և մերթ փող:

Վ անքի պարագից գուրս՝ երկեռում են Արտաշատի հընութիւնները, որոնք թէ և անհետացած են՝ բայց կան դարձեալ այնպիսի տեղեր, որտեղ հիմքերի նըշանները երկեռում են: և կան դարձեալ այնպիսի տեղեր՝ որոնց վերայ մանդալու ժամանակը մինչև անդամ լսվում է տալարկութեանց ձայներ (գմբղմբոց): Կայ նոյնպէս և մի բլակ՝ որի տակը երկեռում է որ տագարկ է: այդ բլակից գուրս են գալիս՝ մէկ տեսակ ապակի անման սպիտակ և փայլուն բաղադրութիւն: որը կարծում ենք, իբր՝ որ գաջի մի ամենապատուական սեռն է: գորա մեծութիւններն են ձեռաւափ: Ինքը շատ փուխրն է, և ծալ ծալ վերցնվու մէ դրահասով մինչև անգամ ծխախոտի թղթի պարակութեամբ: Մեղ պատմեցին որ նոյնը գուրս է գալիս և նրեանայ հանդերի մօտ, գաջանքում աւելի մեծու-

թեամբ. գործնում ենք մասնագիտաց ուշադրութիւնը:

Սուրբ Խորվիրապի ճանապարհը Նրեանից սկսած՝  
ընդ ամենն 36 վերստ է, որը ուղղակի արքունական  
փոշոցի ճանապարհ է մինչև Խրայ Հայոց գիւղի  
այդիների գլուխը. որտեղից կայ 2 ճանապարհգե-  
պի աջ, ա. ճանապարհը անցնում է այդ գիւղի  
արտօրէից միջով, որ շատ անյարմարութիւններ է  
լինում արտօրյաքը ջրելու ժամանակ. իսկ թ. ճա-  
նապարհը Քիւզուկ Վէդի անուաննեալ թուրքաց գիւ-  
ղի կողքովն է անցնում, որը ամենայարձար և ա-  
մենառողին է սոյլով կամ կառքով գնալու ժամանակ:

Այս բոլորից յետոյ՝ պարոք ենք համարում գար-  
ձուցանեալ ընթերցողի ուշադրութիւնը առ այն՝ որ  
ամեն մի Հայ, երբ մի փոքր խոր մոածէ՝ նա ան-  
շուշտ կհամոզուի մեղ հետ, որ այս Սուրբ Խորվի-  
րապայ վաճիքը, Հայերիս համար ամենավաեմ, և ա-  
մենառուիրական ուխտառեղերի շարքումն է գտնը-  
վում. որովհետեւ այդ աեղ այդ սուրբ հողի վերայ,  
այդ նուիրական դաշտի վերայ, այդ Խոր Վիրապի  
մեջ, այնքան երկար տարիների ընթացքում՝ միշտ  
աղօթելով ապրեց երկնային հոգւով՝ Սուրբն Գրիգոր,  
և եղեւ մեր Հայաստանեայց աշխարհի և Եկեղեցւոյ՝  
բազմերակատ երբորդ Ա. Լուսաւորիչ. հաստատելով  
մեր Եկեղեցական սուրբ կարգերը, կանոները, Ա.

պաշտամունքը, Առաքելաւանդ հրմունքը են. են;  
Իսկ այժմ մենք Հայերս, անվզով, անհոգ, անուշա-  
դիր և վերջապէս երախտամու ընթացքով՝ ապրում  
ենք հանգիստ. չնայելով որ, մենք հոգւով և մարմ-  
նով պարտական ենք, այդ հայրենեաց առը հողի հը-  
նութեան յարգը, պատիւը, և վերջապէս վերին ապ-  
արձանի վսեմութիւնը ճանաչել. բայց վայ մեղ...որ  
մենք ոյնպէս ե՞նք նայում, այնպէս ե՞նք ուխտադրա-  
կան այցելութիւնը մուացման տուել, որ կարծես  
թէ, այդ նուիրական ա. տեղը՝ մերը չէ...ԱՌԵ ահ-  
ներելի յանցանք: Սուրբ Մեռնի օրհնութեան ժա-  
մանակ՝ որ մօտ 2,0000 հողիք կլինէին՝ մենք մեծ  
զարմանքով նկատում եինք մի քանի հեռաւոր տե-  
ղի ուխտաւորների վերայ, որոնք մասդիր չէին գը-  
նուլ. Ա. Խորվիրապ: Մենք բազմիցս յորդորելով որ-  
պէս օրբազան պարտք՝ խորհուրդ տուինք գնալ և  
այցել այդ Ա. Խորվիրապը: Իսկ մի քանիսները ա-  
սացին որ եթէ մեր ծանօթ վարդապետները և ե-  
պիսկոպոսները խորհուրդ տան՝ կգնանք. որովհետեւ  
մենք նոցա հիւրերն ենք...նոցա ենք նոյում...:

Եւ այսպէս, ամենայն խոնարհութեամբ և խորին  
ակնածութեամբ՝ գիմում ենք նորին Վեհափառու-  
թեանը, որ ի պատիւ այն սուրբ Պաշտեական Լու-  
սատուին մելոյ Ա. Գրիգորի Հայրապետական ԳԱՀԻ

գարձուցմնէ Խւր հայրական գթալի ողորմածութէ ամբ ինսամքը, ոյս բոլորովին մոռացուած Ս. Խոր Վիրապայ վանից վերսոյ, որ ինչպէս հեռացուած է կղերականութեան ինսամքից՝ նոյնպէս և աշխարհականների այցելութիւնից, որ ոչ մի պատիւ չէ բերում՝ գոնէ մէջ վերջիններիս։ Վերջացնելով մեր տողերը, կարեռ ենք համարում ի լոյս համել վանքիփոշալի անկիւններից հետեւալ գեղեցիկ բանաստեղծութիւնը։

«՚ 1832 ամի, յումեմնէ միաբաննէ Ս. Երուսաղեմոյ ասացեալ ի զովեստ վանից Ս. Խորվիրապայ ի գալն յուխտ և յերկրագութիւն աղօթատնողոյն կուսաւորչին Հոյաստանի Ս. Գրիգորի մեծի Պարթեի։»

1. «Աստուածադաշտորդ գահ հրաշալի,  
«Սուրբ Խորվիրապ գրախտ ցանկալի。  
«Ենեալ հրաշնք զարմանալի,  
«՚ Վերսոյ չքնալ փոքրիկ բլրի։
2. «Քանզի սա է հուպ Երասխայ,  
«Յոր հիմնարկեայ Տրդատ Արքայ.  
«Կամարացարկ ըստ Սազիմայ,  
«Սնունդ ձայնի երկրորդ Սինայ։
3. «Մաքուր մարմին աստ ժամանեալ  
«՚ մէջ գահիս հանգիստ առեալ,  
«Գո՞ւ այլ բազում նշխարք սրբոց  
«՚ Բժշկութիւն հոգւոց մերոց։

172. ԾՆՈՂԱՅ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԱՆԴԹՈՒԹԻՒՆԸ

Անցեալ 1882 թ. սկզբներին՝ Հոօմ մայրաքաղաքում, մարդ ու կին մէկ սոսկալի և չափազանց անխղճաբար անզթութիւն գործեցին իրենց գեղեցիկ օրիորդի վերայ։

Նիարդու հիւրանոցատէր Անտօնիօ Բլանկ, և իւր ամուսինը ունէին մի հատիկ 20 տարեկան օրիորդ Մարգարիտ անուամբ։ Օրիորդը խիստ երեւելի գեղեցկութիւնը ունէր։ Նորա շատ չէկ երկար մաղեսը, վայելչահասակ մարմնոյ զրութիւնը, երեսի ուղղագծութիւնները և ածխանման սե աչքերը, հարկադրում էին բոլոր երիտասարդներին, գողզողալ և թալկանալնորա առաջ։ Բայց Մարգարիտը, խիստ խոհեմ էր և ամօթիած։ ուստի և ուշագրութիւն չէր գարձում բոնիկական սիրահար երկրպագուներին։ այլ աշխատում էր, խոյս տալով հեռացնել նրանց, և առհասարակ ցանկութիւն չունէր մարդու գնալ։ Այնու ամենայնիւ հաստ և ժամանակը։ Նորա ջերմեռնդ երկրպագուներից մէկը, սաստիկ հետամտութեամբ աշխատելով՝ վերջապէս հաստ բարձանքին։ Նոքա իմիսանին խնդրեցին ծնողաց օրհնութիւնը։ Հայրը և մայրը, թէ և՛ չէին ցանկանում իրենց աղջկան մարդու տալ բայց կամայ ակամայ ստիպւ

ուած էին տալ իրենց համաձայնութեւնը. որովհեաւ, ոչ մի մերժման առիթ չունեին: Ծնողական օրհնութիւնը ստանալով՝ նշանուեցին, և սիրահարուած ջրխառակները այս երջանիկ օրը նստեցին մինչև վերջին արշալյուր, չենացնելով աչքերը միմիանցից դիշերը միմիանցից շատուշ հեռացան. ամենքը գնացին իւրեանց սենեակները: Մարդարիտը պառկեց կողինքում, բայց չկարողացաւ քնել. նորա սիրավառերևայութիւնները իւր սիրելոյ հետ օդային առերոցներ շինեցին ապագայ ընտանեկան կեանքի մէջ: Յանկարծ նա լսեց իւր ծնողաց ձայները, որոնք քը նած էին կողքի սենեակում: — «Ի՞նչ անենք արդեօք մենք Մարդարտի հետ, ասեց հայրը. — Նա մարդու է գնում: Նորան պէտքէ տալ իւր դրամաղլուկուր, որ կտակել է նորան իւր տատը: — Այո, մեր դրութիւնը անյաջող է. — պատսսխանեց մոյրը: — Ո՛չ ես այդ փողեց յետ չեմ մնալ. — ասաց ազդու կերպով շրջնելով հայրը. — գիտես որն է լսուր. . . սպանենք Մարդարտին. և վերջը ջրի մէջ ձգենք»:

Անբազդ աղջեկը պարզութեամբ լսեց այս խօսքերը, լսեց բայց չհաւատաց ինքն իւրեն: Նորան խիստ զարհուրելի էր երեսում այս բոլորը, և սարսափելի էր լինում քնելը: Այսու ամենայնիւ նա չքնեց: Դուրսը արդէն լուսացել էր, արևի առաջին ձառաւ-

գայթը, արդէն թափանցել էր կրկնալուսամտէց նորա սենեկի մէջ. իսկ նա չմոռացաւ ոչ մի վայրկեան: Նա դուրս թռաւ իւր կողինքից, հագնուեց և վագեց տանիցը: Աննպատակ շրջելով քանի մի ժամ փողոցներում, նա վերջապէս վճռեց գնալ իւր հօրաքրօջ մօտ և պատմել այս բոլորը: Հօրաքոյրը, ինպէս որ սպասելի էր՝ երեկք չհաւատաց Մարդարտի խօսքերին, հաստատելով որ այդ բոլորը երազական ցընորդներ են:

Ծնողքը նոյնպէս իրենց կողմից արդէն զգում էին որ բանը վատ է գնում: որ իրանք չափազանց յափշտակուել էին իրենց գիշերային խօսակցութիւնների մէջ. ուշադրութիւն չգարձնելով որ իրենց սենեակին կից պառկած է Մարդարիտը: Ստիպուեցան գործը շուռ տալ կատակի, համբուրելով և զանազան փաղաքական խօսքերով, սկսեցին հաւատացնել անբաղա Մարդարտին իւրեանց սէրը, որպէս զի կորցրնեն նորա մոքից իրենց գիշերուան խօսակցութիւնները: Այս բոլորի հետեանքը ինքն ըստ ինքեան այնէր ի հարկե, որպէս զի Մարդարտին վերադարձնէրն իրենց առնը. որպէս և եղել իսկ:

Անցնելով քանի մի օր, Մարդարիտը նստել էր լուսամտի մօտ և աշխատում էր, այն ինչ՝ յանկարծ քարասիրտ ծնողքը զարհուրելի և սարսափելի կոր-

պով լսիեցին ծանրակշեռ դլանով \*) նորա գլխին, և իսկոյն խլացրին նրան. անբաղդ Մարգարիտը վեր ընկաւ տախտակամածի վերայ անշնչացած, զարկելը կրկնեցին քանի մի անգամ: Եւ այս բոլոր աննկարադրելի անդթութիւնը գործեցին սիրելի՝ ծնողները: «Մեռա՛ւ, բացականչեց հայրը. — նայիր, նորա երեսին արեան նշան էլ չկայ. բայց ականջներիցը թափվում է արիւնը:» «Այս, մեռա՛ւ, յաղթանակաւ պատասխանեց մայրը. — «այժմ մեղնից չեն կարող փող ստանալ:» Եւ ճշմարիտ որ, անբաղդ օրիորդի գլուխը ջարդուած, և արիւնաշաղախս փուռած ընկած էր պախտակամածի վերայ: Նորա երկար խիտ մաղերի հիւսերը փռուեց և ծածկեց ուսը և թիկունքը. նորա բերանը և ըթունքը հենց միայն սիրոյ վառ խօսքովը թոթոփուած պապաջուած զուռաթափուեցին, և ու աչքերը խփուեցին: Այս բոպէում զթասիրտ հայրը արտասանեց այսպիսի խօսք. — «Գիտե՞ն, պէտք է կորենք Մարգարտի հիւսերը, նայիր, ինչպէս խիտեն ու երկար և ինչպէս զարմանալի գոյն ունեն: Մաղերի հիւսեր շնողները, մեղ կտան ամենաքիչը 300 ֆրանկ:» «Այս, այս ի հարկէ. բացականչեց մայրը թէ չէ իսկոյն մէկ ակնաթարթում վա-

զեց և բերեց մլրատը. և այսպէս Մարգարտի ամենագեղեցիկ մազերի հիւսերը իսկոյն կորեցին: Այս չորագործութիւնից յետոյ գուրս եկան տանից, ըսպասելով գիշերուան խաղաղ ժամանակը, երբ նրանք վճռել էին գուրս տանել աղջկայ գիտելը, ուր և իցէ մի տեղ: Սակայն, անբաղդ աղջիկը չմեռաւ. — այլ նո ննթարկուած էր միայն խոր ուշաթափութեան մէջ:

Քանի մի միջոց անցնելուց յետոյ, վոքր առ փոքր Մարգարտի ուշն եկաւ, մասքերեց և կշռադատեց բոլորը. ինչոր նորա զլիսովն անցաւ, նա մի կերպով մօտեցաւ դռանը. և բայցարեց գուռը և սկսեց օգնութիւն կանչել: Նուտով վապեցին դրացիները և ոստիկանութիւնը, վերաւորուածին իսկոյն ուզարկեցին հիւանդանոց. իսկ չաբագործներին բանդարկեցին, գուրս հանելով փայդեայ պահարանէց՝ աղջկայ արիւնաշաղախս մազերի հիւսերը: Անբաղդ աղջկան իսկոյն բժշկական օգնութիւններ հասցրէն: Դժուար էր վճռել կառողջանահր արգեօք: Եատ կարելի է նրան կը փրկէր երիտասարդական հասակը և վառուած սիրահարութիւնը գեպի իւը նշանածը, որը մօտ էր արդէն ցնորուելու:

(\*) Փոքրեկ սկւանձե հաստ փայտ, գրգնակի նման:

173. 1881-1882 թ. Մէջ ՊԱՏՈՀԱՆՑՈՒԹ ԵՐԿՐՈՇԱՐԺՆԵՐԸ \*

Հոկտեմբերի 27ին 1881 թ. Դահթախթում՝ որ  
Ոռուսաստանի Երևանայ նահանգումնէ. զգալի եղե  
երկրաշարժի հարուած: Նախ լուեցաւ ստորերկ-  
րեայ որոտում, որ ուղղվում էր արևմտքից դէպի  
արևելք:

Զուէցերիայում անցեալ 1881 թ. յաճախակի կր-  
կնվում էր երկրաշարժը: Սեպտեմբերի 9ին երեկոյ-  
եան 10 ժամին Ֆրէյլուրդում, մէնէվիայում և ու-  
րիշ շատ մերձակայ տեղերում, եղեքանի մի ստորեր-  
կրեայ ուժեղ երկրաշարժի հարուածներ:

Եւրօպայէ Հիւոկային Կաշնդրում 1882 թ.

Շաբաթ 14 ն Յունվարի, երեկոյեան 10-11 ժամի  
մէջ Ինդիքինկայում, որ հարաւային Խոտլանդիայի  
արևմտեան եղերքումն է, զգալի եղեւ երկրաշարժ,  
որը քանի մի տեղերում բռւականին թոյլ եղաւ. իսկ  
միւս տեղերում այնքան սաստիկ էր՝ որ շատ տնե-  
րում կահ կարասէքը, մահճակաները, բազկաթոռ-

(\*) Տես „Ծաղ. Բնուա. է. ա. 1882 թ. 125 յաւ. 311-315 և 142  
յաւ. երես 346-349.

ները և այն, ոկանցին իրենց տեղերից շարժվել տառ  
և անդ: Համանման երեսյթի մասին հալորդում են  
կլիտունից և Կօլտինգից, որ մինչև անգամ՝ ափե-  
րի ձինորսները, զգացին՝ որ ձգվում են դէպի անու-  
ղիղ քարոտաբները, չնայելով որ նոքա գանգում էին  
Ճզգրասպակէս ծովի բաւականին խորքում: Դադերսէ-  
բենից, որ արևելեան եղերքն է հիւսիսային Նլէզ-  
վիգայի, հաղորդում են նոյն երեսյթի մասին հե-  
տեւալը:— Նարաթ երեկոյեան մօտ  $10' \frac{1}{4}$  ժ. այստեղ  
զգալի եղեւ երկրաշարժ կամ ստորերկրեայ հարուած.  
որը շարունակեց 1-2 վայրկեան: Հարուածը այն-  
քան սաստիկ էր, որ բոլոր ապակեղին ամանէքը և  
պարագայքը վեր թափուեցին իրենց տեղերից, բո-  
լորը ջարդու փշուր լինելով: Այն բոլոր մարդիկնե-  
րը, որոնք գտնվումէին փողոցում՝ զգացին որ երկի-  
րը թէ պատվում է ուների տակ. իսկ աներում  
շատ բնակիներ մէծ երկիւղով գուրս թռան կողին-  
քներից, չկարողանալով բացադրել պատահած երե-  
սյթի պատճառը: Զանազան տեղեկութիւններից ե-  
րեսում է, որ երկրաշարժը եղեւ է բոլոր հիւսիսային  
Նլէզվինգայումն և հարաւային Խոտլանդիայումն:

Վեսօբնի Ֆէյլալ կղզու վերայ, որ պատկանում է  
Աղօրեան կղզիների խմբին, Մայսի 12 ին 1882 թ.

եղաւ. սարսափելի երկրաշարժ։ Հարաւածները շարունակուեցին մէկ ժամ, որոնք անքան զօրեղ էին, մինչև որ շատ եկեղեցիներ, հասարակական շինութիւններ և մասնաւոր տներ չիմքեց քանդուեցին։

Տաճկաստանի նրգնկայ քաղաքում 1882 թ. Յունի վարի 14ից մինչև 18ն. եղեւ երկրաշարժ, որի սպիտ ստէպ ցնցումները մեծ երկիւղ պատճառեցին բնակչաց. բարերազդաբար ոչ մի զնասակար հետևանք չէ ունեցել։

174 Ճ Ի Ճ Ո Ւ Ի Դ Ե Ղ Ն

Մէկ հին աղճառեալ թղթի վերայ, մենք գոտոնք հետևեալ Հայկական բժշկականութեան ձեռադիր խրանիները. որոնք ահա և մենք կարեոր ենք համարում տաղագրութեամբ երեան հանել։

Ներսի ճիշուն որ կամիս սպանանել՝ դադան և ուխն եփէ և կեր. որ շուտով կօդնէ, վերջացնելով բուլը ճրճուքը։

175 Ք Ո Ւ Ն Բ Ե Ր Ե Լ Ո Ւ Հ Ն Ա Ր Ք Ը

Առհասարակ այն հնանոլին որ քուն չունենայ՝ շաղկամն եփէ, պինդ ճիշէ, և դիր ոսների տուկն ու

կապէ, որ փութով անուշքուն կբերի։

176. ԽՈԽՈԾ ՄԱՐԲԵԼՈՒ ՀՆԱՐԲԸ։

Վերցնել մեղրը, սպիտակ ոսպը և սև բողկը, ահա այս բոլորը միմեանց հետ խառնել և ուտել. որ խօսքը կպարզեցնէ և բաղլամը բոլորովն կսրվէ։

177. ՔԹԻՑ ՍԲԻՒՆ ԳՆԱԼՈՒ ԲԺՇԿԵԼՈՒ ՀՆԱՐԲԸ։

Քթից որ անկաղար արիւն երթայ՝ վերցրու աղինջն եղինջն և լսւ ծեծիր, ու դիր ճակատի վերայ որ խկոյն կարգել է արիւնի դալը։ Կամ կղտօրըն աղայ և քթի մէջը փչիր։ Կամ թէ, արջասպը աղայ և քթի մէջը փչիր. խկ, բանէ եթէ արիւնը բերանն երթայ՝ և սիրտն ցաւացնէ, այն ժամանակ առ 10 ընկոյզ և նոյնչափ կնդրուկ կամ խունկ, մէկ տեղ ծեծիր ու մեղրի հետ խառնիր և ոյնպէս եղիք առաւօտ անօթուց կեր և այնպէս կօդնէ։

178. ՃԱՆՃ ՓԱԽՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԲԸ։

Ինչակը որ ճանճերը հաւաքուին, եթէ կամենաս նրանց տանից հեռացնել և փախցնել այն ժամանակ

վերցրու արջասապը և ծխիր այն տեղ որոնք ինկոյն  
կանչետանան:

179. ՀՈՒԻ ՓԱԼՈՑՆԵԼՈՒ ՀՆԱՐՔԸ:

Վերցրու թրմուջն և ջրի մէջ ձգիր, իսկ ջուրն  
շաղ տուր գետնի վերայ, որ ամենելին մէկ հատ ևս  
չի մնալ:

180. ՓՈՂԱՑԱԻԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՀՆԱՐՔԸ:

Վահասարակ փողբռուկը, որ իսխատ իջուած լի-  
նի և շատ նեղացնէ, ու ջանայ որ իսեղտէ՝ իսկոյն  
առ ուռի տերեւն և ծեծիր ու ջուրը հանիր, և մէկ  
կաթիլ նուշն ձեթ կաթայրու մէջը, յետոյ դոլտ-  
ցրու, ու առ բերանը մինչև պօշտու և զլղլացրու-  
քանի մի անգամ, միայն ջուրը փոփոկելով, որ շու-  
տով առողջանայ:

181. ՓԱՐԻԶԻ ԲՆԱԿՉԱՅ ԹԻՒԲԸ:

Վերջին ժողովրդական վիճակագրութիւնից յայտ-  
նուեցաւ, որ Փարիզում 2,225,910 հոգի են այժմ,  
այն ինչ 1876 թ. նորանում կար միայն 1,988,806

բնակիչ, ուրեմն 6 տարուան ընթացքում Փարիզի  
բնակիչների թիւը աւելցաւ 237,104 մարդ:

182. Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵ-  
ՂԵԿՈՒԹԻՒՆԸ:

Անցեալ 1881 թ. Դեկտեմբեր ամսում եղեւ Ս.  
Պետերբուրգի զիսաւոր աշխարհագրութիւնը, ընդ  
ձեռնարկութեամբ՝ գիտնական հռետորի Պ. Եանսօնայ:  
Որից երեեցաւ՝ որ միմիայն մայրաքաղաքի բնակչաց  
թիւն է առանց 4 ծայրերի մասանց՝ 861,920 մարդ.  
իսկ եթէ հաշուել և այս 4 մասերը, որոնց բնակիչ-  
ների թիւն է 65,547 մարդ. որոնք և ալէտքեն, ու-  
րեմն Ս. Պետերբուրգի ամբողջութիւնը կլինի մինչև  
927,467\*) հոգի, երկսեռ կարգից, արական մասը լինու-  
մէ 513,120 հոգի. իսկ իգական մասն է 414,347  
հոգի: Ուրեմն Պետերբուրգում մարդիկը աւելի շատ  
են կանանցից 98,773 հոգի:

Ուշադրութեան արժանի է և հետեւեալ վիճակա-  
գրական տեղեկութիւնը:—Պետերբուրգի բոլոր ու-  
սումնաբանների և գպրոցների թիւը եղեւ 645: Դի-  
նետներ, գարեջրական տեղեր և առհասարակ սոցա-  
վերաբերեալ խանութներ, մինչև 2,379: Գրախանութ-  
ներ 92 և Դեղատներ 74:

(\*) Տես „Ֆակտ. բնակ. է. ա. 1882 թ. 324 էր, 141 յաւ:

183. ՄՈՍԿՈՒՄՅԻ ՆՐՈ ԱՇԽԱՐՀԱԴՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԲ:

Մոսկուայի քաղաքային վիճակադրական մասը հազարդում է, որ համաձայն Յունվարի 24-ին վիճակադրական անեղեկութեան՝ բաւականին աւելանալով բնակչաց թիւը, յայտնուեցաւ՝ որ Մոսկուսյի պիտին բնակչութիւնը է 748,000 հոգի:

184. ՆԻՒ ԵՕՐՔԻ ԲՆԱԿՉԱՅ ԹԻՒԸ:

Ա երջին ժողովրդական աշխարհադրութիւնից յայտնուեցաւ որ Նիւենօրքի բնակչութիւնը բաղկանում է 1,206,222 հոգի, որանց թվումն են՝ 18,952 հոգի նժողովացիք, 727,629 հոգի բնիկ երկիրացի, 29767 Անդղեացի, 198,595 Երևանացի, 8,683 Վկովացի, 9,910 Գաղղիաց. 12,223 Իտալացի, 9,020 Լեհացի, 4,551 Ռուսներ և 153,482 Գերմանացի և Աւստրիացի:

185. ԱՄԵՆԱԽՈՐ ՀՈՐԾ ԱՇԽԱՐՀԻ ՄԼԶ:

Բոհեմիայում երկու տարի առաջ՝ Պչերրամի արծաթեայ հանքելում փորեցին մեկ հոր, որի խո-

րութիւնը հասցըին 1,020 հետք: Հանքաբանի հոգացողութեամբ աշխատութիւնը մինչեւ այն միջոցը, երբէք չէր հասցըել այնքան խորութեան որ և իցէ մի հորի:

Ներկայ ժամանակումն, նոյն իսկ հանքում՝ փորել են մի ուրիշ հոր. որի խորութիւնը հասաւ 1032 հետք: Նորանից առելի այլ ևս անկարելի էր փորել, որովհետեւ արդէն նոյն իսկ խորութեան մէջ՝ ասքութիւնը համարեա անդառում էր:

186. ԵՐԿՐԱԴՆԴԻՍ ՎԵՐԱՅ ԵՂԱԾ ԼՐԱԴՐՆԵՐԻ ԹԻՒԸ:

Ամերիկացւոց մեկ լրագիր հաշուելով երկրիս վերայ հրատարակուող լրագրների թիւը, հասաւ հետեւալ վերջաւորութեան: Ամերուջ երկրագնդի վերայ հրատարակում է 34,274 օրագրեր, լրագրեր և ամսագրեր, բոլոր տպուածների գումարն է 10,600,000,000 օրինակներ: Այս թուից հրատարակում է Եւրոպայում 19,557 լրագիր: Հիւսիսային Ամերիկայում՝ 12,400: Ասիայում՝ 775: Հարաւային Ամերիկայում՝ 609: Աւստրիալիայցւոց Ասիայում՝ 661. և Աֆրիկէում՝ 132: Այս լրագրներից 16,500 Անդղեացւոց լեզուով է: 7,800 Գերմանացւոց լեզուով: 3,800 Գաղղիացւոց լեզուով: Եւ 1,600ից առելի Խազա-

սպանացւոց լեզուաւ:

Ամենայն օր գուրս են գալիս 4,020 օրագրեր; Տարաթը 1-3 անգամ—18,274: Իսկ մնացող լրագրերը—8,508:

187.

ՍՍՐՍՈՒԹԵԼԻ ՀԵՂԵԴ:

Հիւսիսային-Ամերիկացւոց Նահանգներից հաղորդեցին 1882 թ. գարնանը խիստ ցաւալի և տիսուր համբաւներ, այն զարժուրելի ջրհեղեղի մասին՝ որ յառաջացաւ Միսսիսիպի գետից: Աւելի քան 60,000 մարդիկ՝ մնացին ամենաթշուառ դրութեան մէջ, և պիտի բոլորովն քաղցածութիւնից փշանային, եթէ միոյն շուտով օգնութեան շասնէին պետութիւնները և մասնաւոր խնամատարական ժողովները: Երեսուն ազնուական ցեղեր՝ Արկանզասում, Տէննէսում, Միսսիսիպում և Լուիզիանասում մնացին ջրի տակ: Հեղեղի փչացրած տեղերն են ամենալաւ բամբակների շրջապատած դաշտերը: Փորձը ցոյց է տալիս ցաւելով՝ որ ջուրը համանման պատահմանքների ժամանակ՝ մնումէ շատ անգամ՝ ամսից աւելի, միևնոյն բարձրութեան մէջ:

188. ՆՈՐԱՆՇԱՆ ԾՆՆԴԱԿԱՆ ՊՑՂԱԲԵՐՈՒԹԻՒՔ:

Փարիզում՝ 1882 թ. Ապրիլ ամսի մէջ, Կենդանաբանական պարտիզում մէկ կին զբօննելու ժամանակ ծննդական ցաւ զգալով՝ մէկ բաւականին մեծ երեխայ ծնեց: միևնոյն ժամանակ սասատիկ զժուար դրւթեան մէջ էր: Զբօննողներից քանի մի բարեսիրտ մարդիկ թէ նորան և թէ նորածին երեխուն՝ խիստ մեծ օգնութիւն հասցրին. տանելով խարյն նորաընկերու հոյ արկնոջ առունը: ճանապարհին արկինը կրկին մէկ երեխայ ծնեց: Վերջապէս տուն հասնելով՝ նա ծնեց երրորդ երեխայ: Նորածին երեխանները ամսուր կազմուածք ունեն: Մազրասի մօտ, Խուրդամիր թուլքաբնակ գիւղում, մէկ թուրք կին ծնեց մի անգամից՝ 4 զաւակ, որոնք բոլորն ել առողջ են:

Սահ-Ջրանէխսկակյունն մէկ կին, որ շատ տարիներ ամսուրի էր՝ յանկարծ յղեացաւ, և 1882 թ. միանգամից ծնեց 6 հատ գեղեցիկ աղջիկներ: Նորածինները, որպէս և մայրը՝ առողջ են մնացել:

Ախ-Եօլքի մէջ, մեռաւ 1882 թ. Փետրվար ամսին Գոկասը Առաստինի կինը 58 տարեկան հասակում: Հանգուցեալը իւր կինաց մէջ՝ ծնեց քառա-

սուն և չորս երեխայք-տղայ և աղջիկ: Նորա երկու քոյրերը, որ գեռ կենդանի են՝ գերազանցվում են նոյնպէս իրենց պողաբերութեամբ: Մէկ քոյրը ծընեց մինչև օրս, քառասուն և մէկ երեխայ. իսկ միւսը ծնեց մինչև օրս, բանև վեց երեխայ:

Գաղղիայի թուաբանագիտն կարօշայ՝ ասում է ժուբէրի հաշուով որ եթէ այսպէս նորանշան պըտպարերութիւնը երեար այս գերգոտատանի բոլոր անդատմների մէջ, մինչև հինգերորդ պորտը շարունակ, այն ժամանակը՝ ժառանգերի թիւը աճելով կհասնէր մինչև՝ 221,875,000. որոնք համարեա բուական կլինէին բոլոր նւրօպայի բնակութեան համար:

189. 1882 թ. ԶՄՇՌՈՒԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶԱՆԱԳԱՆ ԱՇԽԱԲՀՈՒՄ:

Այս անցեալ 1882 թ. ձմեռն այնպիսի տարօրինակ մեծ վոփոխութիւններ արեց զանազան աշխարհներում, որ մինչև անդամ ամեն տեղ ամբողջ ժողովրդին մեծ զարմանք պատճառեց. որովհետեւ համաձայն օգերեւութաբանական հսկողութեան՝ ներկայ գարիս մէջ, գեռ ևս չէ եղել այսպիսի ընդհակառակ կողմերում փոփոխական տոք և ցուրտ ձըս, ինչպէս այս 1882 թ. ձմեռն էր: Որովհետեւ,

այն երկրներում՝ ուր պէտքէ բնականապէս ցուրտ լինէր՝ եղեւ սաստիկ տաքութիւն, և այնուեղ՝ ուր տաք՝ եղեւ խիստ սառնամննիք: Երապայի ամենայն կողմերից տեղեկութիւններ սուացուեցաւ իւր ժամանակում բարեխառնութիւնների անկանօն դրութեանց մասին: Սիէզիայում 23 ին Դեկտեմբ. 1881 թ. արդէն երեւցան արագիլները. իսկ Բերլինի շրջակայքումն, ինչպէս և Բիդայումն երեւցան սարեակներ:

Ահա այսպիսի անկանօն եղանակներ, երեացել են նա ևս և չին ժամանակներում: Օրինակի համար, կարեռ ենք համարում յիշել հետեւալները, — 1421 թ. գեռ Փետրվարի վերջին՝ ծառերը բացուել են. Մարտի վերջին ծաղկել են խաղողի որթերը. իսկ Ապրիլին արդէն հասելէր պալը:

1538 թ. Ցունվար ամսին, այդիները ծածկուած էին ծաղկներով: 1589 թ. Ոչ սառնամնիք էր եղել և ոչ ձիւն:

Իսկ 1690 թ. Գերմանիայում ձմեռն այնքան տաք էր անցել՝ որ բոլորովին չվառեցին վառառանները: 1781, 1807 և 1823 թուերին նոյնպէս զարմանալի տաք անցան:

Հիւսիսային Զինաստանում այս 1882 թ. ձմեռն ձիւն չերեաց, որ շատ զարմանալի բան էր, և այս

ի. Հարկէ շատ զնաս պատճառեց այնտեղի դիւդացիւներին: Այս առթիւ՝ ինքը Զինաստանի կայսրը Կը վինդ—Սու, որ 12 տարեկան է, 35 օր շարունակ աւմեն երեկոյ գնում էր ձիւնի աստուծոյ ազօթառեղը աղօթելու, որպէս զի նորա ողորմածութիւնը շարժէ: Բայց բոլոր այս 35 օրուան մաղթանքները կայսրին ոչ մի օգնութեան չհասցրին: Յետոյ կայսրը կարգադրեց, որ ձիւնի աստուծոյ մօտ գնան՝ աղնուականների և քաղաքապետների-Մանդարինների պատգամաւորութիւնները, որպէս զի մանրամասնաբար բացադրեն յիշեալ աստծուն, նկարագրելով ժողովուդոց խորհալի գրութիւնը: Կայսրը ի նկատի ունեց այն՝ որ յիշեալ պատգամաւորների միջնորդութեամբը ըստ յաջողութիւն կլինի:

Վ ասպուրական աշխարհը, Վանայ ամբողջ շրջան կայքում մկնեց ձմեռը սաստկութեամբ: Դեկտեմբերի 6 ից 1881 թ. մկնեց սասանամանիք, որը օր ըստ օրէ աւելի սաստկանալով, եղեւ մինչ այն սատիճան սաստիկ ձմեռ՝ որ երբէք տեսնուած չէր, բայց ձերունիք պատճեւմ են որ 20 տարի առաջ կրկին եւ զած էր այսպէս ցուրտ: Արձակու՝ երեւելի մեծ լիճը այնու ամենայնիւ այն ժամանակ սառած չէր. իսկ այս 1882 թ. մասամբ սառեց և մնաց ամբողջ երկու ամիս: Ահա այսպէս ցուրտը սաստկութեամբ

շարունակուեց ամբողջ ձմեռն, մինչեւ անգամ Ապրիլի 12 ից նորից ձիւն եկաւ բաւականաշափ և այնպէս մինչեւ Ապրիլի վերջը ձիւնը թափվում էր աւմեն առաւօտ և մինչեւ երեկոյեան հալջում էր. Թէ և այս խիստ օգտաւելու էր այն կողմերում, բայց ոչ ամեն տեղ, օրինակ Վանայ լճի հարաւային կողմը Գաւաշ գաւառում, ուր ոչխարները և տաւարները սկսեցին կոսորուելու որովհետեւ ձմեռուան պատրաստած պաշարը գեռ չըացուեցին մինչեւ Մայիսի ըստ կղզները:

Երջում նոյնպէս ձմեռը եղեւ երկար և խիստ ցուրտ: Մինչեւ Ապրիլի վերջերը դեռ ձիւները հալված չէին, ժողովուրդը զարմացած էր մնացել ձրմեռուան երկար՝ միենայն ժամանակ և անշարժ դրութիւնների վերայ:

Վ արս քաղաքում և ամբողջ շրջակայքում, ձմեռը նոյնպէս երկարատեւ էր և խիստ. ցուրտը այն սատիճանին է եղել՝ որ մինչեւ Ապրիլի 5 ն կատարեալ թունդ ձմեռ էր:

Աղեքսանդրապում այս ձմեռը եղել է խիստ սաստիկ և երկարատեւ: Ապրիլի 14 ին նորից մեծքանակութեամբ ձիւն եկաւ և սաստիկ ցրտեց եղանակը, ուստի և տիրացրեց ժողովրդին:

Վ արաքիլիսում, նոյնպէս ձմեռն եղեւ խիստ և եղա-

կար. Ապրելի սկզբներին նորից ձիւն եկաւ. և ցուրտը այն աստիճանին հասաւ՝ որ կարծես թէ Յունիվարի տմիսն էր:

Նոր Բայազիտում՝ այս ձմեռ ցուրտը նոյնպէս խիստ էր և սարսեցուցիչ մինչև Ապրելի վերջն համարեա թէ ամեն օր թափվում էր ձիւն և ձիւնախառն անձրւել:

Աւանսոյ լիճը վատաւորապէս սառեց, և հաստ այն աստիճանին՝ որ դեռ մինչև Ապրելի վերջը չըշալուեց: Բոլոր կառքերը և ֆուրգունները ևն, գլուխում էին սառցի վերայով:

Տիեզիս և իւր շրջակայքում նոյնպէս սաստիկ էր ցուրտը և երկարաւեւ:

Եւպատորիայ, Սիմֆերոպոլ, Սէվաստոպոլ ևալտոյ, Բաղչասարայ, և բոլոր շրջակայքը, այնէ ամբողջ Ղրիմու կողմերը, զարմանալի կերպիւ տուք էր. որ համարեա 1-2 անգամ հազիւ երկեաց ամենաթեթև պարտկ ձիւն. այնպէս որ՝ միւս օրը այլ ևս չկար:

Ա. Պետերբուրգում նոյնպէս ձմեռն անցաւ տմենատաք, շատ հազիւ պատահում էր պարտկ ձիւն, որը միւս օրը արդէն չէր լինում. Մարտից սկսած շատերը լուսամաները բայց էին արել. անձրել գալիս էր յաճախ և մերթ ձիւնախառն:

Մուկու այում համարեա զարժացած էին տաքութեան վերայ, որովհետեւ ձմեռ չեղեւ, և ձիւն չեկաւ. տաքութիւնը պատեց փոխանակ սառնամանիքի:

Նոր Խախիթջեան, Նովոչերկասկոյ և Բաստով, անցան ձմեռն խիստ տաք եղանակով և պարզ օրերով:

Բաթում և առհասարակ նորա շրջակայքում, այս 1882 թ. ձմեռն անցաւ խիստ սաստիկ, միւնոյն ժամանակ և շատ ձիւն կար, այնպէս որ, դեռ Մայիսի ամին ձիւնը չէր վերջացել մերձակայ լեռներից, այլ շարունակում էր ցուրտը: Մինչև Ապրելի վերջն ընտանեաց մէջ դեռ վառվում էր հնոցն: Ուշագրութեան արժանի է այն՝ որ Բաթումի մէջ սառոցց չի լինում, ըստ որում ճահճային է և խոնաւ. որոնք ջուրը չեն սառցնում, այս առժիւ ամառն զանազան տեղերից են բերում սառոցցը, բայց այս տարի այնքան ձիւն եկաւ, որ հարիւրաւոր հորեր լորեցին ձիւնով: Ձիւնի շատութեան առթիւ 8-10 օր էր որ քաղաքի հաղորդակցութիւնը բոլոր վին կորուեցաւ դիւղերի հետ, որ ի հարկէ մեծ նեղութիւն էր բնակիչների համար, և զարմանալի էր որ միւնոյն ժամանակը և ծովի վերայ խիստ ալէկոծութիւն էր լինում, մինչ յայն աստիճան՝ որ Փօթիի հետ շղենաւների յարակցութիւնները քանիցս անգամ 10-15 օրով ևս խափանուեցաւ:

Պարսկաստանում նոյնպէս խիստ սաստիկ սառնապատ էր այս ձմեռն, որ սկսուեց դեռ Հոկտեմբերի սկզբից. ամբողջ Դավթէժը և իւր շրջակայքը մեծ նեղութեամբ ծփում էր այդ երկարատև ձմրան մէջ, այնպէս որ, համարեա թէ ամբողջ Ապրիլ ամիսն մառախլապատ էր և մթնդած: Ապրիլի 14 ին նորից չափազանց կերպով խիստ շտո ձիւն նստեց, և ժողովուրդը յուսահատութեան մէջ ընկդմուեց:

Կօջօրում և Բօրժօմում՝ որ Տվիխիսու նահանգներն են, ձմեռն եղեւ նոյնպէս սաստիկ և երկարատև մինչ այն աստիճան՝ որ Մայիսի 23 ին, նորից երկու չերշնչի չափ ձիւն եկաւ Կօջօրում և Բօրժօմում:

Երեանում և իւր բոլոր շրջակայքում՝ ձմեռը սաստիկ էր. Դեկտեմբերի սկզբից սկսեալ աւելի սաստկացաւ, և եղաւ խիստ երկարատև համարեա. բոլոր տղներում պակասեց վառելափայտը, գնելով քանի մի նուագ չափազանց թանգ գներով՝ յոյս ունելին ամենքը, որ ահա գուցէ փութով անցնի սառնամանէքը, բայց ոչ, նորի նորոյ աւելի երկարում էր ձմեռը և ժողովովին մեծ յուսահատութեան մէջ ձգում. հաստատէ դասը յլլատի առթիւ մեծ նեղութեան մէջ էր: Եւ այսպէս ցուրտը երկարելով հասաւ մինչև Ապրիլը: Մայիսի 18 ից սկսեալ գիշերները սաստիկ ցըրտեց. և եղեւ շարունակ անձրեային և խառն եղաւ-

նակ, մինչև ամսի 25 այսպէս անցաւ. Մասիս և Արագած լեռները ծածկուեցին բաւականաշափ մեծ ձիւնով: Ամառն և աշունը անցան ամենագեղեցիկ:

190. ԱՂԵՏԱԼԻ ՊԱՏՈՀՄՈՒՆՔ ՎԱՐՇԱԽՈՒ Ս. ԽԱԶԵԿԵՅԻՑ ՄԵԶ:

Անցեալ 1881 ամի Դեկտեմբերի <sup>13/25</sup> ին, Վարշաւու Ս. Խաչ եկեղեցում, ժողովուրդը լցուել էր և աղօթք էր անում, առաւելապէս կանայք: Ժամասացութիւնը վերջանալու վրայ էր՝ երբ յանկարծ լսուեցաւ խիստ բարձր՝ մարդի ձայն, որ բացականեց՝ «ինդրեմ դաստարկել եկեղեցին, որովհետև կանանց զրութիւնը վասթար է լինում::» Համարեա թէ միենոյն միջոցին՝ մի ոմն գոռաց, «Հրդեհ:» Առանից յետոյ եկեղեցու մ ծագեց սարսափելի խոռնակութիւն, և բոլորը սկսեցին գլխիվայր թափուելով շփոթուած գուրս գալ այնպէս որ, սորանից յետոյ այլ ևս անկարելի եղաւ նկարագրել այն դառնալի տեսարանների մէջ որևէ իցէ մէկին: Ամեն մէկը, աշխատում էր աղատուել ինչպէս կարելի է շուտով և փախչել երեւակայած երկիւղից: Բարեմիտ և պատկառելի անձիք, ի զո՞ր էին աշխատում մեծ տքնութեամբ ևուժով այն՝ որպէս զի, կանգնացնեն՝ հանգստութիւն

և կարդ: Ի դուր էին վովոխում նուագարանաց ձայշ  
ները և երաժշաների երգեցողութիւնները:

Բացի մի քանի անձանց՝ բոլորը յանկարծական  
երկիւղի մէջ էին: Եկեղեցւոյ դռների մէջ յառաջա-  
ցաւ սարսափելի սեղմումն, այնպէս որ, բազմաթիւ  
անձինք ճիշտելով հասան մահուան դուռը, շատե-  
րին վայր էին ձգել պատի վերայից, ևն ևն:

Հեռագլուխայնել էին հրգեհաշէջներին, որոնց  
ամբողջութիւնը շուտափոյտ վաղելով հասան ոյն ա-  
զլուտալի տեսարանին, և ընդունեցին իրենց վերայ՝  
սպանուածներին և վերաւորուածներին հիւանդա-  
նոց տանելու պարտաւորութիւնները:

Բազմաթիւ բժշկները և ողորմած քոյրերը, մեծ  
եւանդով էին աշխատում, ինչ որ կարողանում էին.  
Նախապէս վերաւորուածներին օգնելով: Սուրբ Խաչ՝  
և հիւանդանոցի Ս. Պօլս եկեղեցիների առաջ հաւ-  
աքուել էին ժողովրդի անհամար բազմութիւնը: Հո-  
գույ վրովման զարհուրելի տեսարանը, ինչպէս որ  
յառաջանում էր նոյն իսկ հիւանդանոցում՝ նոյնպէս  
էր և փողոցում: Մարդիկները յուստհատութիւնից  
կոտրասում էին իրենց ձեռները, պարտելով իրենց  
կորած և անյատացած կնօջը, հօթը և երեխաներին,  
որոնց վերջինները բարձրաձայն գոռալով ողբում էին  
և կանչում ծնողներին և եղբայրներին: Ահա այս

տեսարանը դղրդմամբ Ճեղքելով ամբոխը փոռում էր  
բոլոր կողմերը, յառաջացնելով ամենազառն արտ-  
մութիւն:

Ամբողջ քաղաքը, բոլոր առողջ մնացածներին՝ ցոյց  
տուեց մարդասիրական խիստ մէծ օգնութիւն. ամեն  
կողմերից առատապէս ինքնայօժար կամքով թափ-  
վում էին օգնելու: Թէ ի՞նչ յանկարծահաս ընդհա-  
նուր երկիւղ էր տիրել աղօթողներին՝ կարելի է գա-  
տել նորանից, որ նորանք ուշագրութիւն չգարձրին  
մինչև անգամ պատարագիչքահանայի յորդորանքին,  
որը խորհուրդ էր տալիս բոլորին հանգիստ մնալ:  
Անբաղդութիւնը տեսեց ընդ ամենն քանի մի բովէ:

Աղետալի գիպուածքից մի փոքր անցնելուց յետոյ՝  
անձամբ անձին եկան Ս. Պօլսոյ հիւանդանոցը, կար-  
գագրութեան համար, քաղաքապէտ Մէդէմը և Գե-  
ներալ-Գուլբերնատոր Գրաֆ Ալբէգինսկիյ: Վարշաւու  
Պրօկուրօրը ներկայացաւ անյապաղ զիպուածքի պա-  
տահած տեղը, որպէս զի, հարցափորձութիւններով  
զանել, աղետալի դիպուածքի յանցաւորները: Կաս-  
կածանքը քցեցին իրենց վերայ 20 երիտասարդ ան-  
ձինք որոց թվումն էին և 2 կանայք, որոնք և իս-  
կոյն բանդարկուեցին:

Երբ որ հրգեհաշէջները եկեղեցին մտան՝ իսկոյն  
նշմարեցին եկեղեցւոյ մէջտեղն մի երիտասարդ կէս  
10

ունանի, խանգարուած երեսով և թարշամած աչքերով, որը բռնել էր իւր ձեռների մէջ իւր մեռած կնօջը, և որը՝ ուղղեց անշարժ հայեայք սեղանի վերայ կախ տուած Ս. Մադոնի պատկերի վերայ: Նա դուրս բերեց իւր կնօջը ամբոխի միջեց արդէն մեռած, դէն քցեց իսկոյն իւր վերայից վերարկուն, և ու մի կերպով չէր կամենում բաց թալնել ամբոխին ձեռքից: Բարեբաղդաբար, բժշկական օգնութիւնը չստիպեց երկար համբերել իրեն:

Մհծամանութիւնը զբկուեցին կեանքից—կանայք, որոնց թվումն էին Գրաֆուհի Ալէկսանդրովիչ և Գերմանուհի-Բոննա Մարեայ Սփարէնկոյ:

## 191 ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

### Ա. „ГОРОДЪ ЭРИВАНЬ“

Степана Зелинского. Перепечатано изъ „Сборника Материаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа“. Тифлисъ Типogr. Главн. Упр. Намѣст. Кавказскаго. 54 стр.

Յունիս, 1881 թ. լոյս տեսաւ Օռուերէն լեզուու վերոյդեալ տետրակը. մեզ որպէս պարտականութիւն՝ կարեոր ենք համարում ներկայացնել սի-

րելի ընթերցողաց մեր քննողական հայեացքը այդ հետաքրքրական աշխատասիրութեան վերայ. որի տպագրութիւնը գեղեցիկ է և թուղթը լաւ:

Պ. Ս. Զելինսկին, Ոռուաց բանասիրական ամբոխին ներկայացրեց մի տեսրակ, որը պէտքէ անշուշտ գրաւէ ուսումնականաց ուշադրութիւնը, և որը ծշմարտութեամբ պէտքէ խոստովաննել բաւականին քրտնաջան մեծ աշխատութիւն է, և յոյժ պիտանի գործ: Պ. Ս. Զելինսկին փոքր նեղութիւն չէ կրել այդ տետրակի վերայ, նաև երբ որ շրջելով գրումէր խանութները, գլխաւորապէս՝ արհեստաւորաց դասը կամենում էր թագանել իւր աշակերտներին, կարծելով մի գուցէ թէ կառավարութիւնից գաղտնի նրանակած լինին, վերջապէս ի՞նչ պաղատանքով նա կարողանում էր ծշտութեամբ նշանակել այն բոլորը: Ահա թէ ի՞նչ է բարունակում յիշեալ տետրակը:—

Պատրիարքական Տէղէնութիւն. Երևանի մասին: Անյա մասում խօսում է, „Երևան“ բառի վերայ. Եւսոյ Երևանին տիրապետողների անունները հ. Նահանգունանցի Յ. Խոլիս. \*) Ոռուաց տիրապետութիւնը ևն:

Երեւանի արքային պետը, դիլքը, սահմանը, մեծութիւնը, օդը, խմելու ջուրը, ոռոգումն, այցելուած-

(\*) Խառը, Կաթ. Եջմիածնի և 5 գտաւ. Արար. Խորհուրդն ենք տալիս բանասիրոց կարդալ այս ընտակը գերքը, դանէ 133-160 հն:

նութիւնը, պարտիզանութիւնը և արուեստադիշտութիւնը: Այս բաժնում նոյնպէս աշխատել է հեղինակը մայնել ուշադրութեան արժանի պատմական անցքեր, քաղաքքի գրութիւնը, թաղերի զանազանութիւնները առողջապահական կէտից, ջրերի ընարութիւնը, ամբողջ երկու տարրուայ եկած անձրիների ընդարձակ աղեւսական պարզ հաշիւր, որ մի երեկի և բաւականին գիտուար հետախուզութեան մի պատուղ է, ուստի և պատիւ է բերում Պ. Ս. Զէլինսկուն, ամբողջ տասն տարրուայ մէջ 1870-1879 ննջեցելոց թիւը, եղած պասկները և ծնուած երեխանները, որ այս բոլորը ժողովելով իմիասին մեծ աշխատանք են պահանջել Պ. Զէլինսկից: Ցեսոյ ըստ կառմ է կարդաւ պատուղները, նոցա տեսակները, դրա թիւնները, կենդանիները, անասունները, վաճառականութիւնը, արուեստը, նորանց թուերը տեսակները և այլն: Քաղաքի մուտքը և ծալիքը, բընակչաց թիւը և այլն: Ֆուզիլը հակառակութեանը, ուր տիսուր տպաւորութիւն է տեսնել Հայոց գլուխների մասին, ուստի և կարևոր ենք համարում այդ կոորդ հատուածը թարգմանելով գնել այս աեղ, և 45 և 46 երեսներից: «Հայոց ուսումնարանների գլխաւոր պահապահութիւնը գործում է նորանում՝ որ նոքա չընեն որևէ իցէ մի որոշեալ նախագիծ, և ոչ մի

«որոշեալ ուսման ընթացք: Այսօր մի բժիշկ Խ. առաջարկում է առողջապահութիւնից և մարդակազմութիւնից ձրի դասեր, ուսումնարանի տևոտ չը, «յարմար է դասում ընդունել այս բարեկործական առաջարկութիւնը. վաղը մի նոր վարձուած ու սուցիչ զիմնազիայի կամ Յէալական ուսումնարանների հինգ-վեց երրորդ գասատնից, առաջարկում է սովորցնել Գաղղիերէն լեզու, նորան ևս չեն «մերժում: ուսումնարանի հոգաբարձուններից, որ և «իցէ մէկի մէջ յղանում է միաք, բացազրել պարիք գութեան ուսման օգուտը և անհրաժեշտութիւնը, «այս էլ է ընդունիվում: Հայոց ուսումնարանների այս բոլոր պահասութիւնները, յառաջ են գալիս գառտիարակութեան գործի՝ անկանոն կարգադրութիւնից, ուսուցչոց գիտութեան թերութիւններից և գառտասափութեան ձեի պահասութիւնից:

«Ուսումնարանի գործերը կառավարում են այնպիսի մարդիկ՝ որոնք զանազան հայեցքներ ունեն ուսումնական գործի վերայ, և շատ անդամ էլ առանց մանկավարժական կրթութեան: Հայոց Հոգին որ ուսումնարաններում՝ գործին սակաւ չէ միաւսում բարդ կառավարութիւնը. օրինակի համար, «Հայոց Հոգեօր Սէմինարիէն կառավարում են՝ և «Եջմանագինը, և՝ Առաջնորդը, և՝ Սէմինարիայի ուն-

«սուչը և՝ հասարակութեան զանազան գասակարգից «հինգ կամ վեց հոգաբարձուները, կազմուած։ Այս «հոգաբարձուները, որոնց պարտականութիւնն էր՝ որ զգիւաւորապէս հոգս տանէին ուսումնարանինիւթաւ «կան բարօրութեան վերայ, շատ անդամ ուսման մաս «սի դէկը իրանց վերայ են առնում, և լինելով նորա «մէջ անհմուտ՝ ցոյց են տալիս ուսումնարանի տես «չին զանազան կանոններ, շարադրում են դասաւուութեան նախագիծը, և համարեա թէ ամեն ա «միս արձակում են և նշանակում ուսուցիչներ։ Հաս «կանալի է, որ վարժապետները չեն կարող դիմա «նալ ոյսպիսի հանդամանքների տակ, չնայելով առ «այն որ նորանց տարին վճարում են 400լց մինչեւ «1200 լուբլի։» Խակ 50 երեսում ասում է «Չնայել «լով առ այն՝ որ այս (նրեւանայ) ուսումնարանը կը «լում է Բարձր կոչումը, - Սէմինարիայ, բայց ուսման «ընթացքը գաւառական վարժարանի ուսման ընթացքը աւելի չէ։»

Այս այս բոլոր ցաւալի դրութեան վերայ, առաջարկում ենք խոնարհաբար, գարձուցանել իւրեանց խորին ուշադրութիւնը, այն անձանց՝ որոնց պատիւ է բերում վերայիշեալ ճշմարտութիւնները...»

Սոյանից յետոյ գնում է Պ. Զէլինսկին, ուսանող աշակերտաց ցուցակը, ապդութիւնները, մուտքագրութիւնները...»

Հոգենոր դպրոցի և այլն։ Վերջումը դրուած է առանձնապէս նրեանի քարտէղը։

Այս այն բոլոր ամենահարկադրութիւնները նրեանի մասին՝ տալիս է Ոռուսաց գրականութեանը Պ. Ս. Զէլինսկին, ուստի և մեծ ազբիւր է ամեն մի հետաքրքիր բանասիրի համար, ունենալ պատրաստի իւր գրասեղանի վերայ, մենք գովելով այդ աշխատանքը յայտնում ենք հրապարակաւ մեր շնորհակալութիւնը Պ. Ս. Զէլինսկուն. խնդրելով միևնույն ժամանակ՝ ի լոյս ընծայել հետզհետք նոյնանման ուշադրութեան արժանի տեղեկութիւնները։

192. ԱՆՑԵԱԼ ԵՒ ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ՄԵՐ ՕՐԱՅՈՒՑՆԵՐԻ  
ՀԵՏԱՔՐԹԻՒԹ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Բ.

Ազգիս բանասէրներին խիստ լաւ յայտնի է որ մենք մեր Օրացոյցի վերջին քննութիւնով, \*) նրեան հանեցինք այն բոլորը, որոնք փակուած էին և գեռ պիտի մնային մըթութեան մէջ։ Եւ որովհետեւ մեր Օրացոյցները արդէն ամեն տարի, ենթարկուումեն զանազան փոփոխութեանց՝ ի շնորհս մեր Ս. Էջմիածնական ... ուսումնական սուրբ հայրերի վասնորոյ պարտք ենք համարում շարունակել մեր քըն-

(\*) Տե՛ս „Մալ բուռ... Զ. ա. 1881 ամի. 269-273 երեսները»

նո թիւնները, որպէս զի պարզուի այդ խճճուած հանելուկը:

1881 թ. առաջին անգամ մեր Օրացոյցը ուղարկուեցաւ Կովկասեան Գրաքննական Ատենէն Ս. Սինօդին Ս. Եջմիածնի, ուր մի առ մի քննելէն զինի՝ Յ սրբոց հաստատ կիւրակինների խաչանիշները ✚ ջընջեցին և շնչեցին հասարակ օրեր. իսկ 1 օր բարձրացին և անդեւն զրեցին ✚ ընդունելով կիւրակէ: Մենք, հլու այդ վեհագոյն հրամանին՝ այնպէս և տպեցինք ու շարունակում ենք, բայց միեւոյնժամանակ, մենք մեր խզճի դէմ բոլորովին ազատ ենք, ըստ որում, մենք միշտ ասել ենք, ասում ենք, և ասելու ենք, որ այդ բոլորը, ընդգեմ են մեր եկեղեցւոյ ամբիջ հիմունքներին:

Այժմ գառնանք դէպի մեր ներկայ խնդիրը:—  
1881 թ. մեր Օրացոյցի մէջ բայցի վերոյնշեալք՝ Եր. որ , Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չաքչարանացն և մոլն ի վերապն՝ էր՝ այդ սրբագումար ... հայրերը «ՍՈՍԿԱԼԻ ԶԱՐՉԱՐԱՆԱՑՆ» որ ամենազիխաւոր տօնի խնդրին է, ջնջեցին, այլ հրամայեցին լոկ տպել՝ «Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ մոխին ի վերապն»: Ուրեմն երկեցաւ, որ այդ 19 երրորդ դարու ուսումնական ժողով Ս. հայրերը չեն ընդունում այդ մեր Լուսասութին Ս. Գրիգորի

, Սոսկալի չաքչարանքն: Եւ որովհետեւ վեհագոյն էր հրամանը՝ մենք ակամայից ստիպուած տպեցինք: Իսկ 1882 թ. ձեռագիր Օրացոյցի մէջ, մենք կրկին գրեցինք Տօնացոյցից այդ , Սոսկալի չաքչարանացն՝ բառերը բարեբաղգաբար գոքա այդ տարին գգացին երենց առաստիւլի սիրու, ուստի և թոյլ առումն մեզ տպելու ամբողջապէս: Բայց այդ տարին էլ... գուան մի նոր սխալ, այն է Աւ. Ուրբաթի տակ դրած, , Այսօր է յերեկին ծռանը Շնելոյ հրաման ոչ գոյ մինչև յերերոյն ժամաստութիւնն՝ փառաւարապէս ջնջելով հանել էին: Մենք մկնեցինք մասածել որ գուցէ Տօնացոյցը սխալուած է. այլ այդ աճբար օրը Ս. Եջմիածնուում սրբագումար ... հայրերը Ծննների Ութեամբ են մնցուցանում այնպէս և մենք հլու հպատակութեամբ չապեցինք: Խսկ ներկայ 1883 թ. Օրացոյցը խմբագրելու միջոցին՝ Տօնացոյցից կրկին մայրինք այդ «Այսօր ի ցերեկին ծռնդր գնելոյ հրամանն ոչ զոյ մինչեւ յերեկոյեան ժամաստութիւնն»: Ի՞նչ ալէս եղաւ մեր զարմանքը, Օրացոյցը ստանալին գինի՝ երբ բարեբաղգաբար խսկոյն աչքի ընկառ՝ որ անցէւլ պարուածքը, այս տարի թոյլագրեցին ապազրելու...: Եւ այսպէս մենք միառ մի նայելով մեր Օրացոյցը, երբ հասանք ✚ Աւ. Եշ. օրը. ովքան մեծ եղեւ մեր զարմանքը, երբ աեսանք որ Աւագ Հինգ-

շաբթի օրը, որ յատուկ և մեծ կիւրակէ էր մինչև այժմ, յանկարծ այս 1883 թուականին՝ մեր ուսումնական սուրբ հայրերը վերցնելով կիւրակէն ջնջեցին ✕ խաչանիշն և շինեցին հասարակ օր. ահա որպէս և մենք բոլորովին վերցրել ենք կիւրակէն և եղել է հասարակ օր. մենք երբէք մեղադոր չենք, որովհետեւ պարտաւոր ենք վեհագոյն հբամանը կատարել բայց այնու ամենայնիւ՝ պնդում ենք և միշտ ու հանապազ պնդելու ենք, քանի որ նոր էին շեշտական և Աղքային թե ժողով չի եղել որ այդ օրը ՀՈ.ՍՍՈ.Տ ԵՒ ՄԵԾ ԿԻՒՐԱԿԻ է. թող տեսնեն ... Տօնացոյցի 336 եւ բեսի բ. սեան մէջ 13 տողն. ուր փառաւորապէս դրուած է «Աւագ հինդարթի օրը ի թիւս Զատկի և Արդավառի...»: Փետր. 13 ին որ Տեառնընդառաջի նախատօնակն է դրուած է «Հմբ՝ աձ, Մարմացեալդ ի կուսէն» բայց մենք դրել ենք համաձայն տարեգրի 339 երեսի բ. սեան, ուր դրուածէ՝ «Հմբ. բձ. Սքանչելի կանսցքն» և որովհետեւ այս 1883 թ. ապրեգիրն է Զ. ուստի կարծում ենք, որ պէտք էր տարեգրի հետ փալուել: Հոգում. 18 մենք դրել ենք համաձայն Տօնացոյցի «Գոքսիայ» խսկ այդ սրբազն հայրերը ջնջելով շինելին՝ «Եւդոքսիոյց», Ահա ամբողջ 8 երրորդ տարի է որ Օրացոյց ենք խմբագրում ու հրատարակում, նշանակում է որ փոքր

ի շատ է ծանօթ են մեզ սրբոց անուննելը. և ի՞նչ էք կարծում, շարունակ ութը տարի միշտ գրել ենք այդ սրբի անունը այնպէս՝ որպէս գրուած է Տօնացոյցի 332 երեսի ա. սեան 19 տողում «ԳՈՒԲՍԻԱՅ» խսկ այս 1883 թ. աւելացնում են «Եւդոքսիայ» որպէս մենք ևս ակամայ՝ ց դնում ենք, որ ինչպէս տեսնում է ընթերցողը՝ նոյնպէս ընդդէմ է Ար Տօնացոյցին: Եւ որպէս կրկին հասաւատութիւն մեր Ճշմարտութեանց՝ բաւական ենք համարում առաջ բերել միմիայն քանի մի տարուան Օրացոյցներից՝ այդ Ս. Դոքսիայի անուան առթիւ, ողք են.՝ վերցնենք Հենց նոյն խսկ Ս. Էջմիածնական Օրացոյցները, 1874 թ. Հոկտեմբ. 22ին. 1875 թ. Հոկ. 21 ին, 1877 թ. Հոկտ. 18ին, և Հենց 1882 թ. Հոկ. 19 ին որոնք տպուած են հարազատ տօնացոյցին,, ԳՈՒԲՍԻԱՅ՝ վերցնենք և Տէխիսու Օրացոյցներից 1868 թ. Հոկտ. 22ին. 1869 թ. Հոկ. 21ին 1871 թ. Հոկ. 10ին, որոնք նոյնպէս տպուած են հարազատութեամբ «ԳՈՒԲՍԻԱՅ» Ս. յա բոլորից յետոյ՝ որպէս տեսնում ենք, ամեն պարի նոր անոր փոփոխութեաների պիտի էնթարկեն Ար օրուացոյցները, որ յոյժ ցաւալի և տիսուը երեսոյթ է: Արդ՝ ամենախորին որդիիական ակնածութեամբ դիմում ենք Նորին Վեհափառութեան, և Նորին բարձր սրբազնութեան Տեղակալի Նորին, ինդըրելով որ այդ խոշ-

դուների առաջն առնուի և խաղալիք շղառնայ գունէ այսուհետեւ ամեն տարի մէկ կղերականի ձեռքում եկեղեցւոյ կանոնի աղաւաղութիւնքը, մանաւանդ որ կարծումենք նորին վեհ օծութեանը ևս հաւանելի չէ այս ընթացքը։ Առհասարակ ինչ որ կանոն է մեզ համար մե՛ծ է, սուրբ է, հաճելի է. և ամենասիրելի։ իսկ ինչ որ աղաւաղութիւն է, կամ արտաքոյ է կանոնից՝ տհաճելի է...։ Ֆամ է արգէն սթափուել և պինդ պահպանել մերս Ս. Եկեղեցւոյ ... նախնաւանդ ուղղութիւնները, և ոչ թէ ամեն մէկիս ձեռքում խաղալիք շինել նորանց։ թողթէ, միւնոյն ժամանակ նաև լինէր որ և իցէ մի վարդապետ կամ եպիսկոպոս...այս իրաւոնքը միմիայն և եթ՝ Ս.ղիի Ընդհանրական Հայրապետի սուրբ կամացը և ընդհանուր Ազգային-Կրօնական Ս. Ժողովոյ քննութեամբ միմիայն և եթ կարելի է փոփոխութեանց ենթարկել, և ոչ թէ խաղալիք շինել սորան նորան յանձնելով, որոնք լսու կամաց և լսու հաճոյից փոփոխել և թերել ինչպէս որ կամենան...։ թէ շինութեան պատերից ամեն տարի մի քար, մի փայտ կհանէք հատառացէք որ նա վերջ ի վերջոյ վաս դրութեան կհասնի, և դուք մի ժամանակ ապշած կմնաք...։

---

Գ.  
193. ՔՆՆՈՒԹԻՒՆ ԷԶՄԻԱԾՆԱԿԱՆ 1882 թ. ՕՐԱՅՈՒՅԻ:

Մեղ համար որ և իցէ մի քաղցրութիւն չէ տեսնել մեր Ս. Էջմիածնական Օրացուցի մէջ թոյլ տուած ամեն տարի զանազան սխալներ...։ Պէտքէ ասել որ մտածող Հայ սրտի համար դա մեծ ցաւ է. իսկ անմուածողի համար միւնիյն է, .,,: Մենք համաձայն մեր ուղղութեան՝ կատարումենք մեր պարտքը, ըննելով և այս անցեալ 1882 թ. Էջմիածնական Օրացոյցը. — Մարտի 25 ին, որ Աւագ, Եշ. օրն է կիւրակէ Ֆ չէ գրած. այս առաջին անդամն է ահա, որ Էջմիածնական սրբագումար հայրերը ձեռք պարզեցին Ծննդել այդ ՀԱՍՏԱՏ և Մեծ կիւրակէն, որ շատ գժուար է ամբողջութեանը հաւատացնել որ այդ օրը արդէն կիւրակէ չէ, որովհետեւ ինչպէս մենք քննեցինք մեր Օրացոյցի մէջ, այդ արարմունքը աններելի է, ընդդէմ է Տօնացոյցին. Յունիսի 7, 8, 10 ին որ Ս. Գրիգորի Լուսաւորչին Դիւտի նշխարաց պահոց շաբաթն է՝ ոչ Բշ. ոչ Գշ. և ոչ Եշ, բոլորովին չէ գրած այդ օրերը պահեն, որ ընդդէմ է նոյնպէս Տօնացոյցին, երեխի այդ ամբողջ օրերը 1882 թ. մեր Ս. Էջմիածնում ուահիք էր, այս, երեխի ուտիք էր և

նոցա համար՝ որոնց ձեռքերին կար Ս. Եջմիածնա-  
կան Որացյցը... Հգիտենք ի՞նչպէս կարելի է այդպի-  
սի թուլութեամբ ընթանալ...: Յունիսի 26 նր. դը-  
րուածէ միւսներից յետոյ՝ ըսկ «և Պօղոսի» այն ինչ  
պէտքէ լինէր, և որբոյն Պօղոսի Ելեւառան Անուանէրոյն. ո-  
րովհետեւ պէտքէ իմանալ արդեօք ո՞վ Պօղոսի տօննէ...:  
Սեպտեմ. 28 ին փոխանակ Խւստաթէոսի՝ դրուած է  
«Խւստաթէոսի» և կնօջն նորա փոխ. Թէոփիտոսի՝ դը-  
րուածէ «Թէոփիտոսի» պէտքէ ի նկատի ունենալ որ  
այսպիսի տեղերում, այսպիսի սխաները ներելի չեն:  
Նոյեմբ. 20ին Նր. որ Ամենայն սրբոց հոյոց և նորոց  
ևն. տօնն է՝ կիւրակէ ✚ չէ նշանակած. որ բոլորու-  
վին աններելի է: Կրօստիտ ծէսէլը և կոստոները խռով-  
շէս չւն, որ ամեն պողը ըստ համոյի և ըստ էամոց գոփու-  
ին և աղաւան դէս...:

## Ե.

194. ՔՆՆՈՒԹԻՒՆ ՅՈՒՆ. ՏԵՐ Ա.Բ.ԲՈՀԱՄԱՆԻ-ՌՈՍ-  
ՏՈՎ.ՈՒ 1882 թ. ՕՐԱՑՈՒՅԻ:

Ո՛քան հանդիսա, և ողքան անդորր մարդ ևս  
լինէ այնու ամենայնիւ մենք կարծումենք, որ առ-  
ուանց մեծ զարմացքի, և առանց խղճի խոր ցա-  
ւակցութեան՝ չէ կարող նայել երբ դէ՛թ մի ան-

գամ գոնէ աչքից անցնէր մեր հայոց Օրացոյների  
մէջ եղած համեմատութիւնները, ուր կտեսնէր մի-  
միանց հակառակ աղաւաղական սխաները. և ահա  
նա կյիշէր որ այդ իսկ են աղաւաղութիւնք աղաւ-  
աղութեանց...: Բանասէր ընթերցողը, տեսաւ ար-  
գէն և՛ Եջմիածնական Օրացուցի սխաները, տեսաւ  
նոյնպէս՝ և մեր Օրացուցի ամենահարապատ քննու-  
թիւնը համաձայն Տօնացուցի մերս Ս. Եկեղեցւոյ ըստ  
Եջմիածնական տպագրութեամի: Այժմ մենք քննու-  
թեամբ ներկայացնում ենք, նա ևս և՛ Տէր Արքա-  
համեանի Օրացոյցի սխաները, որոնք բոլորովին հա-  
կառակ են ո՞վ թէ միայն Տօնացուցին՝ այլ և՛ Եջմի-  
ածնական Օրացուցին: Տեսնենք...:

Յունավորի 13/ն՝ որ ութօրէքն է Ս. Ծննդ. Տօն  
Առանձնահոչութեան և Թշոտութեան Տեսան մերոյ Յիսու-  
սի Քրիստոսի Տէրունական կիւրակի է, բոլորովին խռա  
✚ չէ զրել այլ շինէլ է մի հասարակ օր, որ ան-  
ներելի և ընդդէմ է ո՞վ թէ միայն Տօնացուցին՝ այլ  
և բոլոր միւս Հայոց և Ռուսաց Օրացուցների հետ,  
զարմանալի այլ իմն հերոսութեան պիտի հաշուել  
այն, այսպիսիների ընդդէմ կանոնի և օրինաց վար-  
ուեցողութիւնքը: Արատի 25/ն. որ ✚ Աւ. Եշ. օր-  
նէ՝ Պ. Տէր Արքահամեանը մշասպէս զնումէ «Տօն ա-  
մենասուրբ Հաղորդութեան» որ բոլորովին ընդդէմէ

մեր Ա. Նկեղեց՝ ոյ Կանոնին: Ահա այսպէս են զնում՝  
ագիտաբար բոլոր միւս Կ.-Պօլսոյ և Ս. Երուսաղեմի  
և այլ Հայոց Օրացոյցները, որոնք մեզ յոյժ զարմա-  
ցնում են՝ որ մինչեւ օրս դեռ չեն հասկացել իրենց  
այդ սարսափելի սխալը. որովհետեւ մեր Ա. Նկեղե-  
ցական կանոնի մջջ Խթէ՛չ չկայ այդպիսի՝ մի «Ճն ա-  
մենասուրբ Հաղորդութեան» անուամբ. վասն զի, Ս.  
Հաղորդութիւնն՝ ինքն ըստ ինքեան շատ պարզէ, որ  
յիշատակուում է ամեն պատարագի մջջ մեր Նկեղե-  
ցում: Մինք մեր Օրացոյց հրատարակելու օրից՝ (1876  
թ.) միշտ զնում ենք համաձայն Տօնացոյցի՝ ✽ «Յի-  
շատակ Ոտնալուայն» միմիայն: Ս. Էջմիածնայ Օրա-  
ցոյցներում ևս շարունակաբար զնում էին այդպիս  
մինչև 1881 թ. բայց վերջապէս մեր բերանացի բա-  
նակասութիւնները հայրառլբերի հետ՝ հազ կազ-  
կազացրեց և համապեց նրանց որ այդ օտար եկեղեցւոյ  
ներմուծեալ տօնակատարութիւնը վերցնեն, որը և  
տնօցեալ տարուանից այլ ևս բոլորովին չկայ, որ ար-  
ժանի են գովութեան: Խոկ Պ. Յովհ. Տէր Աբրահամ-  
եանը դեռ անուշադրութեամբ զնում է... կարծում  
ենք, որ ժամանակ էր Ս. Ոինօդն Ս. Էջմիածնի՝ կան-  
գնացնէր և Պ. Տէր Աբրահամեանին, որպէս զի ըս-  
թափուի մեր եկեղեցական կանոնը այդպիսի՝ սխալ-  
ներից: Սեպտեմբ. 28 ին՝ փոխ անակ «Թէոփիտոսի»

Պ. Տէր Աբրահամեանը դրել է թէոփիտոսիս, որ սր-  
խալէ: Հոկտեմբ. 5 ին՝ փոխ Աղբեգիայ, դրել է Պէ-  
ղագիւթ, որ սխալ է: Նոյեմ. 20 ին՝ նր. Ամեսայն  
սրբոց հնոց և նօրոց, յայտից և անյայտից տօնն է՝  
կիւրակէ ✽ չէ դրած, որ պէտքէ լինէր: Գեկտեմ.  
4 ին՝ նր. որ Ս. առաքելոց և առաջին բասարու-  
չացն մերոց՝ ԹԱՐԷՈՒԽԻՄԵՈՒԽԻ, տօնն է՝  
կիւրակէ ✽ չէ դրել որ աններելի է:

Ներկայացնելով այս բոլորը Հայութեան արդար  
գատաստանին՝ լիայոյա ենք, որ կբայ ժամանակ (թէ  
և արդէն իսկ էր)՝ մեզ հետ միանալով կձայնակցեն՝  
Հայութեան անկեղծ պատերը և մեր եկեղեցւոյ անձ-  
նանու էր հոգեռորականները...: Ահա և այն ժամա-  
նակը, մեր ձայնը չէր լինի «Զայն բարբառոց» յանա-  
պատի»:

### 195. ԹօՐԵԶԻ ԼԵՐԱՆ ԺԱՅՈՂ:

Եվելիայում՝ Գլարուսից ոչ չեռու, Քուրեղի  
լեռներից Յունվար ամսին վեր ընկաւ աշուելի մի մեծ  
ժայռ, որի բարձրութիւնն էր՝ մոտ 1000 Քառ. Բա-  
րերարդարար մարդ չէր վաստել այլ փչացան մար-  
դագետիններ, արտեր, պարտէղներ և ձանապարհներ:

## ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

Օրացուցիս սկզբումն լինելու էր, սրբութն ՅՈՒՆԻԱՆԻ պատկերն, բայց որովհետև մինչեւ այսօր, որ է Նոյեմբերի 18ն չառացանք Առակուսայից յիշեալ պատկերն՝ (ըսայելով որ մեր պատուէրները ուղարկել էինք գեա Յունիսին) առիպուեցանք անձարացեալ դնել՝,, ՍՐԲՈՅՆ ԳԵՂԱՐԴԱՅ, պատկերն, որը պատրաստ ունենաք:

Եւ այսպէս ի նկատի ունելով մեր սիրելի ընթերցուները այս անսպասելի անյաջող հանգամանքը, յոյսունենք որ նոքաներողամիտ կլինին:

Խակ Ա. „Յուսկան” պատկերը կհրասարակենք միւս տարի:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Ի նկատի ունելով շատերի ցանկութիւնը, որ մեր Օրացոյցները արգեն լաւ ընդունելութիւն են գտած մերսպնեից ամեն գասակարգի շնչանում, և որոնք տարածվումն համարեա թէ ԱՄԵՆ ՏԵՂ, ուստի՝

մենք յառաջիկայ տարուան համար հիմնում ենք մեր մ. ծագիր Օրացոյցի ՝, Ծաղիկ Ըստանեացի՝ վերջում առանցին մասն, —

## ԲԱԺՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ

Ուր ընդունում ենք այժմէն խակ շարունակաբար, ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ զանազան լեզուներով հետեւեալ կանոնի վճարմամբ՝ Ամբողջ երեսի համար 6 ր. {<sup>1</sup>/<sub>4</sub> երեսի համար 2ր. 50կ. Կէս „ „ „ 4 ր. {<sup>1</sup>/<sub>8</sub> „ „ „ 1ր. 50կ.

Յայտարարութիւնները կտպուեն պարզ մաքուր և գեղեցիկ, որոնք կլինեն կարգաւ, այնէ շուտ ստացուած յայտարարութիւնները կմանեն առաջին երեսներում, խակ զինի ստոցուածները, միջին և յետին երեսներում կլինին:

Ըստունվում է Օրացոյցների հետ տապահելու և ԱՌԱՆՑԻՆ ՏՊԱԳՐՈՒԱԾ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ և ՏԵՏՐԱԿԱՆՆԵՐ: Յայտարարութիւնների համար վճարվում է 1000 համարին 10 ր: Խակ տեարակների մասին հարկաւորէ թղթակցել, նոյելով տետրի զիրքը և մեծութիւնը:

Մեր հասցեն՝ Եղ Շ. Թրիւան

Եղ Տուոգրաֆիո  
Ա. Շ. Գյուլամիրյանց

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ

ՔԱՆ ԵՎ ՔԱԿԻ ԱԶԱՅԻ ԵՒ ԲՈՒՄԻԿԱՆ  
1883 թ. ԵՐՐՈԴ. ՏԱՐ  
ամիսում է ամեն օր բայց լուսաւում է մոտ օդուց, ՏԱՐԵԿԻ  
լավագութիւն համար առաջ է առ 5 իուն, Օպերադուրակի  
Վ. Թֆլիս Խոհեմարդ Պետրոսի անձնագիրը:

Дозволено Цензурою Тифлисъ 17 Сентяб. 1882 года.  
**ТИПОГРАФІЯ А. С. ГУЛАМИРЯНЦА. Г. ЭРИВАНЬ.**

卷之三

Առաջին ի միտմին հրատարակուեցաւ և  
ԱՄԵՆՈՐԵԱՅ ՀԱՅՈՒԱՆԱԿԱՆ

# О Г У З А З З

ԹՈՒԱԿ. 1883 ԳՐԻՍՈՍԻ

և Տօմարի Հայոց ՈՅԼ.Բ. 1332 և ՈՅԼ.Գ. 1333  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

• 0р, ხილანեակ, Ամիս և Տարեմնւո Հայկական, Յուղանեան և Գրիգորեան թուտկանց.

2 0<sup>o</sup>, σημειώστε ή υποτίθετε τις παραπάνω συνθήσεις.

4 Կիւրակէ տռուրք՝ և անուանիք սրբոց.

Դ Կայսերական աւոլով.

Որպես առաջնական անցքերի հայոց. { առաջգծմ

թեան նշանաւոր անձանց Հայոց. Համառօտ:

Մեծ թուանշամինելով. Հայկական կիւրակիներն  
տպուած են հարդար գունով. Իսկ Կայսերական տօն  
օրերը տպուած են հարմիք գունով:

Որացոյցի տախտակն զարդարուած է գեղաքանդակ  
գեղեցիկ պատկերներով. Կրօնական և Ազգային  
մշատակառաններով, և աւճ.

1 բարեկամություն 1 բարեկամ, խոշ ըստից չափ. 1 բարեկամ 25 կազ:

զին է մհաղին օրոցոյ ին հանդերձ յանելու ածով  
մինչև 600 կ. շնորհողութեամբ 35 կ. բար նորանից բարձր՝ 40 կ.

Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

Մեր տպարանում ընդունում ենք անոնք պատուելու, պաքելու,  
տեսրովինը, գործեր, յայտարարութիւնը, այլուամելու, շաբանիաց չլա-  
կը ամելութեր. թէ Հայելին և թէ Ուստերէն և այլն: Պատուելու կո-  
տարմում են ճշտութեամբ, մաքուր, շուռ և չափառ գնելու:

Յանկեցողք կարո՞ւ են դիմում հանդերձ յասցիուն

ԲԵՐ. Դրանիւ ԲԵ Դաշտին

Ա. Ը. Պյամարանէ.

